# Ազգ

Azg

8 ՄԱՅԻՍ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 82(4934)

ISSN: 1829-1651


## Այս ընտրությունների առանձնահատկությունները

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այս ընտրությունները մի շարք առանձնահատկություններ գրանցեցին:

Առաջին առանձնահատկությունն այն է, որ համարյա ոչ մի ձայն չի կորչում եւ փոշիանում այս անգամ, քանի որ խորհրդարանից դուրս մնացող ուժերի հավաքած տոկոսը հազիվ 2 է: Իսկ մնացածը կարծես քարտեզով դրված-գծած լինի:



Երկրորդն այն է, որ պարզվեց, որքան էլ տարօրինակ է, ընտրողը, ընտրական տարիքի ժողովրդի մեծ մասն այնքան էլ դժգոհ չէ իր կյանքից, փաստորեն ու այն չի ուզում փոխել, այլապես իր քվեների մոտ 75 տոկոս չէր տա 10 տարի իշխանության ղեկի մոտ եղած կուսակցություններին (ՀՀԿ եւ ԲՀԿ-ն միասին 75 տոկոսից ավելի քվե ունեն): Ահա եւ ընտրողների մեծ մասը 5 տարի այլեւս իրավունք չի ունենալու նվնվալու կամ բողոքելու, թե մեր կյանքի որակը վատն է, որ սոցիալական իրավիճակն անտանելի է եւ այլն: Նրա ընտրությունը բոլորովին այլ բան է նշանակում, ուրեմն: Անկախ այն բանից, որ այլընտրանք չի տեսել, կամ այլ ուժերի հետ մեծ հաշվով հույս չի կապել: Այսինքն՝ մեր կյանքն ու ընտրողի ընտրությունն իրար չեն բռնում:

Նորից ու կրկին ակնհայտ դարձավ անընդհատ եւ ընտրությունից ընտրություն հայ իրականության մեջ ավելի ակնառու դարձող այն իրողությունը, որ որ հայ ընտրողը քաղաքական ընտրություն չի անում, այլ առաջնորդվում է բոլորովին ուրիշ իրողություններով: Այնպես որ բազմաբարդ այն ծրագրերը, որ քարոզչության ընթացքում մեր կուսակցությունները եւ նրանց ներկայացուցիչները լցնում էին ընտրողի ականջը, բոլորովին իզուր էին:

Տես էջ 8

## Սոցհարցումներն ու այդպես էլ կարգի չեկող հանրային վստահությունը

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սոցիոլոգիական հարցումները Հայաստանի նման երկրում, հաճախ նաեւ փոքր ռեսուրսներով ու, ինչին արդեն սովոր ենք, մեկ մարդու «իրականացմամբ», բնավ էլ վստահություն ու ընդունելություն ունեցող երեւույթներից չեն, հատկապես երբ դրանք հիմնականում ներկայացնում են այն պատկերը, ինչն ակնկալելի է առանց ընտրությունների ու քարոզչության էլ՝ տարբեր կուսակցությունների դրսեւորած վարքագծից ու ներկայացրած «հայտերից»:

Այդ հարցումների նկատմամբ վստահության եւ ընդհանրապես դրանց հուսալիության պակասի մի կարեւոր գործոն էլ հենց հանրային անվստահությունից ծնվող սխալ տեղեկություններն էլ, երբեմն էլ հրաժարումը, երբ հարցումներին մասնակցած ընտրողների պատասխանները առավելապես իրենցից սպասվողն են, քան իրականը. մարդիկ առավել հաճախ որպես պատասխան նշում են այն, ինչ, ասված մի արասցե, խնդիրներ չի առաջացնի այն դեպքում, երբ բնավ էլ այդ պատասխանի համաձայն չեն քվեարկելու կամ քվեարկել: Իսկ որ ընտրողները, անկախ սեփական նախապատվությունից ու հարցման ժամանակ ըստ այդմ տրված պատասխանից, նաեւ քվեարկում են՝ ելնելով ստացած «եկամուտներից», հաճախ նաեւ մի քանի կուսակցությունից կամ թեկնածուից՝ արդեն սոցհարցման ոչ արդյունավետության վկայություն է:

Մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների առնչությամբ նախ քարոզչության ընթացքում սոցիոլոգիական հարցումներ արվեցին: Նախ, Gallup այսպիսինն ու այնպիսինը, որ մեզ մատուցվեցին որպես «The Gallup Organization» եւ «Gallup International Association». մինչեւ քվեարկությունը մի զգալի ժամանակահատված առաջ ինչ-որ տվյալներ ներկայացրին՝ սխալվելու փոքր հավանականությամբ:

Առաջինի համաձայն, խորհրդարան պիտի անցնեին ՀՀԿ-ն (39 տոկոս), ԲՀԿ-ն (26 տոկոս), ՕԵԿ-ը, ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն՝ յուրաքանչյուրը հաղթահարելով անհրաժեշտ շեմը, իսկ «Ժառանգությունն» էլ «անցողիկ շեմին էր տատանվում»: «Gallup international»-ի համաձայն, ՀՀԿ-ն կարող էր ստանալ 39,2 տոկոս, ԲՀԿ-ն՝ 29,9, ՀԱԿ-ը՝ 12,2, «Ժառանգությունը»՝ 6,3 տոկոս, ՕԵԿ-ը՝ 6, ՀՅԴ-ն՝ 5,3 տոկոս: Հանրային կարծիքի ուսումնասիրության համառուսաստանյան կենտրոն ասվածն էլ նշում էր, թե ՀՀԿ-ին հարցմանը մոտ կիրակի ձայն կտային հարցվածների 32 տոկոսը, ԲՀԿ-ին՝ 27-ը, ՕԵԿ-ին՝ 5-ը, ՀՅԴ-ին եւ «Ժառանգությանը»՝ 4-ական տոկոս, իսկ ՀԱԿ-ին՝ 3:

Անհնար է հակադրվել, որ այս հարցումներին եթե ավելացնենք նաեւ Ահարոն Ադիբեկյանի ներկայացրած արդյունքները, պատկերն ուղղակի խճանկար կդառնա, չնայած ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի պարագայում հարցում իրականացնողները «չեն սխալվել», կամ, ինչն ավելի ճիշտ ձեւակերպում է, հարցվածները նույն կերպ են «պատասխանել»:

Տես էջ 2

## Ալի Բիրանդ. «Թուրքիայի հակառակ պնդումները շատ թույլ են»

Հանդես գալով Թուրքիայի խոշորագույն «Հյուրիեթ» թերթի ապրիլի 24-ի համարի էջերում՝ ճանաչված լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության թեմային, նշել է, որ Թուրքիան դարձյալ ստրեսային ապրումների մեջ է, իմանալու համար, թե աշխարհի որ մասում ինչ են ասելու այդ մասին:

«Հատկապես երբ 2015-ն է մոտենում, այդ ստրեսային վիճակը կրկնապատկվելու է: Թուրքիան, ինչպես անցյալում, կոշտորեն է արձագանքելու, սպառնալիքներ է արձակելու, որոնք անարդյունավետ են մնալու: Ինչո՞ւ: Որովհետեւ աշխարհի մեծ մասն արդեն ընդունում է ցեղասպանության վերաբերյալ հայերի պնդումները: Թուրքիայի հակառակ պնդումները ուշացած են եւ շատ թույլ: Եվ մենք կարիք ունենք հեռուն գնալու՝ համոզվելու համար դրանում: Անցյալ շաբաթ այդ թեմայի շուրջը 1000-էջանոց մի գիրք էին ուղարկել ինձ: Գիրքը կազմել էր գերմանացի լրագրող եւ գրող Վուլֆգանգ Գուստը, ընդգրկում է 1915-1916 թվերի գերմանական արտգործնախարարության արխիվների նյութերը: Հրատարակված է հոյակապ թուրքերենով «Բելգե» հրատարակչության կողմից: Դրա անգլերեն, իսպաներեն, պորտուգալերեն թարգմանություններն արդեն իսկ տպագրվում են: Գրքի ընթերցումից հետո հնարավոր չէ ժխտել, թե ցեղասպանություն կատարվել է», գրում է Բիրանդը, վերջում հարցնելով թուրք պաշտոնական այրերին, թե անցած 50 տարիների ընթացքում արդյոք նման մեծածավալ ուսումնասիրություն կատարե՞լ են, արդյոք հետազոտե՞լ են օտար, միջազգային աղբյուրները եւ հրատարակել նմանատիպ մի գիրք: Դուք սահմանափակվել եք կամ բավարարվել թուրքական արխիվներով միայն, որովհետեւ չե՞ք կարողացել հավաստի ապացույցներ գտնել:

«Եկեք չխաբենք մեկս մյուսին: Եթե կարող եք այս հարցերին պատասխանել, գուցե կարողանաք որոշ փաստեր հստակեցնել մեզ համար: Բայց գիտեմ, որ դուք լուռ եք մնալու», եզրափակում է իր հոդվածը Ալի Բիրանդը:

Հ. Ծ.

## Էդուարդո Էռնեկյանին՝ «Բիզնես հանուն խաղաղության» մրցանակ

Ինչպես «**Ազգին**» տեղեկացրեց «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն, մայիսի 7-ին Օսլոյի Կառավարական պալատում Էդուարդո Էռնեկյանին կշնորհվի 2012 թ. «Բիզնես հանուն խաղաղության» մրցանակը: Օսլոյի հիմնադրամը ընտրել է Էդուարդո Էռնեկյանին որպես այն յոթ պատվավոր անձանցից մեկի, ով գործունեությամբ եւ օրինակով խրախուսում է հանրային պատասխանատվությունը եւ բիզնես էթիկան: Արգենտինայի առեւտրի պալատը Էռնեկյանի թեկնածությունն առաջադրել է որպես բիզնես հանրության համար օրինակ եւ ներշնչանքի աղբյուր ոչ միայն Արգենտինայում, այլեւ ամբողջ աշխարհում: «Բիզնես հանուն խաղաղության» հեղինակավոր մրցանակը շնորհվում է Նոբելյան մրցանակակիրներից կազմված հանձնաժողովի կողմից, որը հատուկ զբաղվում է աշխարհի տարբեր երկրներում ականավոր գործարար անձանց ընտրությամբ:

Ս. Ս.

## Դեռ 75 տուժած քաղաքացիներ բուժվում են, 15-ը՝ վերակենդանացման բաժանմունքում

Մայիսի 4-ին Երեւանի Հանրապետության հրապարակում տեղի ունեցած արտակարգ պատահարի հետեւանքով մայրաքաղաքի բժշկական տարբեր հաստատություններ են տեղափոխվել 154 տուժած քաղաքացիներ: Մայիսի 7-ի ժամը 15-ի դրությամբ՝ 75 տուժած քաղաքացիներ գտնվում են հիվանդանոցներում ու ստանում համապատասխան բժշկական օգնություն: 15 տուժածներ դեռ վերակենդանացման բաժանմունքներում են: Ըստ բժիշկների, հիվանդների վիճակը գնահատվում է բավարար, դուրսգրումները շարունակվում են:



ՀՀ առողջապահության նախարարության եւ Հայկական հոգեբուժական ասոցիացիայի համատեղ աշխատանքի արդյունքում անհրաժեշտ հոգեբանական օժանդակություն է ցուցաբերվել բոլոր նրանց, ովքեր գտնվել են դեպքի վայրում եւ պատահարը որոշակի ազդեցություն է ունեցել նրանց առողջության վրա: Հոգեբանական օժանդակությունը շարունակվում է, արդեն 124 քաղաքացի օգտվել է բարձրակարգ մասնագետների ծառայությունից:

Հոգեբանական օգնությունը ընդգրկված չէ պետպատվերի շրջանակներում, սակայն տուժածներին ցուցաբերվում է անվճար: «Ինթրա» կենտրոնը պատրաստակամություն է հայտնել ստացիոնար բուժում ստանալուց, դուրս գրվելուց հետո էլ մայիսի 4-ի միջադեպից տուժածներին անվճար հոգեբանական խորհրդատվություն ապահովելու հարցում: Առողջապահության նախարարությունից, «**Ազգի**» հարցին ի պատասխան, նախարարի մամուլի քարտուղար **Շուշան Հունանյանը** տեղեկացրեց, որ տուժածներին, որոնք հետագայում կարիք կունենան պլաստիկ վիրահատության եւ հետվիրահատական բուժման, այդ բոլորը կիրականացվի պետպատվերի շրջանակներում: Բուժհիմնարկների, օպերատիվ արձագանքը՝ ճիշտ եւ ժամանակին բուժօգնություն ցուցաբերելը, զերծ պահեցին դժբախտ պատահարներից եւ տուժածների քանակը կրկնապատկվելուց: Բոլոր հիվանդները ստանում են համապատասխան դեղորայք:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Երկրաշարժեր Վրաստանում եւ Ադրբեջանում

Երկուշաբթի առավոտյան Վրաստանի եւ Ադրբեջանի սահմանամերձ շրջաններում արձանագրվել է մի քանի ստորգետնյա ցնցում:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է Վրաստանում տեղի ունեցած 5,8 մագնիտուդով ցնցման (Դեդոպլիսցխարո քաղաքի մոտ) մասին:

Դեդոպլիսցխարոյի եւ այլ շրջաններում, ինչպես նաեւ Թբիլիսիում, ճաքեր են գոյացել տասնյակ տների եւ շինությունների մեջ:

Ցնցումների էպիկենտրոնը եղել է վրաց-ադրբեջանական սահմանի մոտակայքում՝ Թբիլիսիից 155 կմ արեւելք:

Ադրբեջանում 5,5 մագնիտուդով ցնցումներ արձանագրվել են Զաքաթալի շրջկենտրոնից 17 կմ հարավ-արեւմուտք: Զոհեր չկան:Հաղորդվում է էպիկենտրոնի մերձակայքում մի շարք շինությունների ավերման մասին:

# Հինգերորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված կլինեն 6 քաղաքական ուժեր

Հինգերորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունների նախնական արդյունքներով, որոնց վերաբերյալ արձանագրությունը երեկ ստորագրեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, խորհրդարան են անցնում ընտրությունների մասնակից 9 քաղաքական ուժերից 6-ը՝ 5 կուսակցություն եւ 1 դաշինք: ՀՀԿ-ն ստացել է 44,05% (663 066 ձայն), «Բարգավաճ Հայաստանը»՝ 30,20% (454 684 ձայն), Հայ ազգային կոնգրեսը՝ 7,10% (106 910 ձայն), «Ժառանգությունը»՝ 5,79% (87 095 ձայն), ՀՅԴ-ն՝ 5,73% (86 296 ձայն), «Օրինաց երկիրը»՝ 5,49% (82 690 ձայն), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը՝ 1,06% (15 933 ձայն), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը՝ 0,37% (5633 ձայն), «Միավորված հայերը»՝ 0,20% (3080 ձայն): Կուսակցությունները պետք 5 % հաղթահարեին, դաշինքները՝ 7 %՝ խորհրդարան անցնելու համար:




Այս ընտրությունները աչքի ընկան մասնակցության բարձր տոկոսով՝ ընտրացուցակներում ներկայացված 2,5 մլն-ից ավելի ընտրողից՝ 1,5 մլն-ից ավելին եկել է քվեարկության: Ոմանք դա բացատրում են շահագրգռող գործոններով՝ նշելով, որ այստեղ դեր են ունեցել ավելի վաղ, հատկապես իշխանական ուժերի բաժանած ընտրակաշառքը, յուրաքանչյուր ընտրատարածքում «սեփական» ընտրողներին տաքսիներով եւ միկրոավտոբուսներով ընտրության հասցնելը ու այս կարգի այլ՝ դժվար ապացուցելի գործոններ:

Սակայն փաստն այն է, որ ընտրողը գնացել է ընտրատեղամաս եւ սեփական ձեռքով ընտրություն է կատարել: Ու եթե այս կարգի շարժիչներ են անգամ ընտրատեղամաս բերել ընտրողների գերակշիռ մասին, ուրեմն մեր ժողովուրդը հենց այս հոգեվիճակում է, եւ այստեղ ոչինչ անել չես կարող: Այսպես թե այնպես՝ նոր խորհրդարանի նախնական պատկերն արդեն առկա է, որը հազիվ թե փոխվի ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից հետո:

ՀՀԿ-ԲՀԿ մրցակցության ինտրիգը, թվում է, լուծվեց, քանի որ ՀՀԿ-ն 40 եւ ավելի տեղ ունենալով համամասնական կարգով եւ 30՝ մեծամասնականով (30 ընտրատարածքում մեծամասնական կարգով նախնական արդյունքներով հաղթել են ՀՀԿ-ականները) 70 մանդատով (մի քիչ ավել-պակաս) որակյալ մեծամասնություն է ունենալու: Սակայն ինտրիգը երեկվա դրությամբ պահպանվում էր, քանի որ ԲՀԿ-ն ընտրությունների վերահսկման համար ստեղծված միասնական շտաբում ընտրակեղծիքների դեմ պայքարելու նպատակով գործակցում էր ՀԱԿ-ի եւ ՀՅԴ-ի հետ, ու նա նույնպես ներշնչող տոկոս է ստացել՝ 30, 2 տոկոս, իսկ այդպիսի տոկոսով բավական լուրջ գործոն կարելի է դառնալ ե՛ւ իշխանության, ե՛ւ ընդդիմադիր դիրքերից: Հավանաբար խորհրդարան անցած ՀԱԿ-ն ու ՀՅԴ-ն իրենց 7 եւ 5,5 հասնող տոկոսներով կակընկալեն ԲՀԿ-ի հետ խորհրդարանական համագործակցության ձեւաչափ, սակայն նույնիսկ գործակցության դեպքում, պատռի-տրաքի, ընդհանուր 46-47 մանդատից ավելին չեն կարող ունենալ, քանի որ ՀՀԿ-ի ենթադրվելիք մինչեւ 70 կամ ավելի մանդատների դեմ ինչ-որ խնդիր լուծել նույնիսկ միասին ունեցածով չեն կարողանա, «Ժառանգությունը» կարծես լրիվ հեռացավ մյուս ընդդիմադիր միավորներից: Ընդդիմադիր թեկնածուներից մեծամասնական կարգով ոչ ոք չի անցել, մինչդեռ ՀՀԿ-ն մեծամասնական կարգով ստանում է 30, ԲՀԿ-ն 8 մանդատ, եւ 1-ը՝ ՕԵԿ-ը: Մանավանդ ՕԵԿ-ի 5-6 մանդատն էլ ՀՀԿ-ի կողմում է:

Այն ենթադրությունները, թե ընդդիմությունը կարող է հրաժարվել մանդատներից, նույնպես դեռեւս անհասցե են՝ ո՞վ է ընդդիմությունը, արդյո՞ք ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն, «Ժառանգությո՞ւնը», թե՞ ԲՀԿ-ն; Վերջինս, այնուամենայնիվ, կուզենա այլընտրանք լինել այժմ արդեն վստահ տոկոսով խորհրդարան անցած ՀՀԿ-ին եւ շարունակել օգտվել ընդդիմադիր գործընկերների ճնշման գործիքից՝ դեպի նախագահական ընտրություններ: Իսկ գուցե ԲՀԿ-ն առաջվա պես կոալիցիա՞ է կազմելու ՀՀԿ-ի հետ, մանավանդ, կամա թե ակամա, ԲՀԿ-ն իր ստացած ձայներով պահպանեց կոալիցիոն հուշագիրը՝ չավելացնելով իր ներկայացվածությունը: Այդպիսով՝ ընդդիմությունը կմնա ձեռնունայն, ինչը հենց սկզբում ենթադրելի էր: Սակայն այստեղ մեկ բայց կա՝ հեռահար գործողությունները դեպի նախագահական ընտրություններ. եթե ԲՀԿ-ն սեփական թեկնածուով է գնալու նախագահական ընտրությունների, ապա թեկուզ նվազ մանդատներով իր գործընկերների հետ պետք է շարունակի գործակցել: Իսկ թե ով, ինչ գործելակերպ կորդեգրի, դա կտեսնենք ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից հետո: Առայժմ առաջին արձագանքներից պարզ է դառնում, որ թե՛ ԲՀԿ-ն, թե՛ հատկապես ՀՅԴ-ն, թե՛ ՀԱԿ-ը եւ «Ժառանգությունը» խիստ դժգոհ են ընտրությունների արդյունքներից եւ ՀՀԿ-ի ստացած ձայները համարում են որոշակի գործողությունների արդյունք:

Բոլոր դեպքերում, ընտրությունների ընթացքում ակտիվացած միասնական շտաբի դուռը երեկ փակ էր, իսկ ԲՀԿ-ի քարոզչության պատասխանատու **Նաիրա Զոհրաբյանն** էլ լրագրողներին ասում էր, թե երբ ընտրությունների ամբողջ պատկերը պարզ լինի՝ կքննարկեն, եւ ԲՀԿ քաղաքական խորհուրդը հայտարարություն կանի: Իսկ առաջին գնահատականը հնչեցնելու է ՀԱԿ-ն այսօրվա հանրահավաքում:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# Սոցհարցումներն ու այդպես էլ կարգի չեկող հանրային վստահությունը

*1-ին էջից*

Մասնագետները հարցումների արդյունքների՝ քվեարկության տվյալների հետ համեմատության դեպքում շեշտում են, որ քվեարկությունից 1-2 շաբաթ առաջ հարցման անցկացումը հավանական է դարձնում սխալվելը, մինչդեռ քվեարկությունից անմիջապես հետո անցկացվող հարցումը՝ exit poll ասվածը, առավել մոտ արդյունքներ է գրանցում: Այս պարագայում հետաքրքրական է, որ թեեւ «ելից հարցման» այս ընտրությունների տվյալները, օրինակ, «Gallup»-ը հրապարակեց հարցվածների գրեթե 46 տոկոսից պատասխան չստանալու դեպքում, արդյունքները հետաքրքրական «նմանություն» ունեն երեկ ԿԸՀ-ի տարածած տվյալների հետ՝ մանրմունր վայրիվերումներով:

Ըստ այդմ, exit poll-ի վերջնական արդյունքներով ՀՀԿ-ին ձայն էր տվել հարցվածների 43,3 տոկոսը, ԲՀԿ-ին՝ 29,3, «Ժառանգությանը»՝ 6,5 տոկոսը, ՀԱԿ-ին՝ 6,4 տոկոսը (կուսակցությունների դաշինքի համար սահմանված 7 տոկոսից պակաս), ՀՅԴ-ին 5,2 տոկոսը, ՕԵԿ-ին՝ 6,2-ը: Մեկ այլ՝ լրագրողական ուժերով ելից հարցման արդյունքներ էլ, ի տարբերություն «Gallup»-ի տվյալները ներկայացնող մի շարք հեռուստաընկերությունների, մեզ մատուցեց «Կենտրոն» հեռուստաընկերությունը, իհարկե, ԲՀԿ առաջնային տեղ զբաղեցնող տվյալներով: Ըստ «Կենտրոնի», ԲՀԿ-ն ստացել էր ձայների 38 տոկոսը, ՀՀԿ-ն՝ 25 տոկոսը, ՀԱԿ-ը՝ 12 տոկոսը, ՀՅԴ-ն՝ 11 տոկոսը, «Ժառանգությունը»՝ 7, ՕԵԿ-ը՝ 3:

Այս բոլոր հարցումների ու դրանց արդյունքների պարագայում մեկնաբանությունները ավելորդ են, առանց այդ էլ պարզ է: Սակայն պետք է նշել, որ անգամ սոցհարցումներով ու քվեարկությունից հետո տվյալներ ներկայացնելով՝ մեր հանրությանը դժվար թե որեւէ մեկը կարողանա նախապատրաստել այն տվյալներին, որ մատուցվում են որպես ընտրությունների վերջնական արդյունք: Իսկ դա ընտրական ողջ գործընթացի ամենակարեւոր հատվածն է, որ այս անգամ էլ մնաց հարցումների ու իրական արդյունքների արանքում:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

# Ընտրեցինք նույնը

**Ընտրությունների օրը, քվեարկությունից հետո «Ժառանգություն» կուսակցության նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանն ասաց. «Ես վստահ եմ, որ վաղը նոր Հայաստանում ենք արթնանալու»: Գրեթե նույն ձեւակերպումներով քվեարկությունից հետո լրագրողներին դիմեց նախագահ Սերժ Սարգսյանը. «Ես քվեարկեցի Հայաստանի առաջընթացի համար, հանուն ապագայի Հայաստանի», ավելի վաղ՝ քարոզչության ընթացքում ՀՀԿ նախագահը մեկ անգամ չէ, որ ասել էր. «ՀՀԿ-ի ծրագիրը ապագայի Հայաստանի ծրագիրն է, ու ՀՀԿ-ն է, որ կարող է երկրում իրականացնել լուրջ բարեփոխումներ»: ԲՀԿ-ն էլ, ի դեմս Գագիկ Ծառուկյանի, ցանկանում է, որ «հայ կնոջ դեմքից ժպիտը չիջնի, ու հայ տղամարդը կարողանա պահել իր ընտանիքը», Ծառուկյանն ու ԲՀԿ-ն նաեւ ընդգծում են. «Հավատա, վստահիր, պահանջիր», տրամաբանորեն ստացվում է՝ քվեարկիր ԲՀԿ-ի օգտին ու պահանջիր, որ... կինդ ժպտա...**

**ՕԵԿ-ն էլ՝ գրեթե նույնը. Արթուր Բաղդասարյանը քվեարկությունից հետո հայտարարեց, որ ինքը քվեարկել է «Օրենքների Հայաստանի համար», ՀՅԴ առաջին համար Վահան Հովհաննիսյանը ավելի հեռուն էր գնացել՝ նշելով. «Ես քվեարկել եմ հանուն մեր հայրենակիցների վերադարձի», ՀԱԿ առաջնորդ Տեր-Պետրոսյանն էլ, հավանաբար վերհիշելով իր նախագահության տարիները, իսկ գուցե դրանք մոռացած լինելու պատճառով, ասել էր. «Ես քվեարկել եմ հանուն ավելի լավ Հայաստանի»:**

**Դատելով ԿԸՀ-ի նախնական տվյալներից, ինչպես նաեւ նախքան այդ սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանի ու Gellup internatioanl-ի «անսխալական ուսումնասիրություններից», նոր խորհրդարան են անցնում հենց այս ուժերը, հետեւաբար երիցս իրավացի էր Կոմկուսի առաջնորդ Ռուբեն Թովմասյանը, որը քվեարկությունից հետո հայտարարեց. «Եկել եմ թոռներիս ցույց տամ, թե ի՞նչ է ընտրությունը», պետք էր միայն հավելել՝ բացառապես դրա համար... Իսկ Դեմկուսն ու «Միավորված հայերը» միասին հազիվ մեկ տոկոս են հավաքել... Շնորհավորում ենք:**

**Ինչեւէ, ընտրություններն անցան, իսկ դա նշանակում է, որ այսօրվանից «Հայաստանն ապագային նայում է ավելի ուժեղացած», որ այսօրվանից «նոր Հայաստանն է», քանի որ ե՛ւ ընդդիմադիր, ե՛ւ իշխանական բոլոր ուժերի ղեկավարներն ու ներկայացուցիչները միաբերան պնդում էին. այս ընտրությունները խիստ վճռական են, հետեւաբար դրանից հետո մեր երկրում «բան է փոխվելու»: Այդպե՞ս է արդյոք: Ինչ խոսք, փոփոխությունները մեկ օրվա չեն, ու դրանց մեկ օրում չէ, որ հասնում ենք:**

**Երեկ մայրաքաղաքի փողոցում ճարահատյալ մուրացկանին անգամ ընտրված ամենալավ իշխանությունը չի կարող այսօր դարձնել ոչ մուրացկան, սա հասկանալի է: Խնդիրն ուրեմն ոչ թե փոփոխությունների ժամկետի, առավել եւս՝ անհրաժեշտության, կարիքի մեջ է, այլ՝ փոփոխությունների տանողների: Այսինքն, եթե դուք սրընթաց երթեւեկության սիրահար եք, ձեզ դա երբեք չի կարող ապահովել հանգիստ քշող վարորդը, որքան էլ նա խոստանա, որ «այս անգամ արագ կվարի մեքենան»: Ընդ որում՝ այդ խոստացողը հաճախ ամենեւին էլ չի ստում, նա իրականում կամենում է, ձգտում է արագ վարել, սակայն... ոչ մի ժողովուրդ պարտավոր չէ սպասել այնքան, մինչեւ իր իշխանությունը սովորի երկիր կառավարել, այո՝ կառավարել, այլ ոչ թե ղեկավարել. տրանք խիստ տարբեր բաներ են, ճիշտ է, հաճախ կառավարիչը չի դիմանում ղեկավարելու գայթակղությանը, ու սա էլ խնդիր է...**

**Բայց վերադառնանք. «այսօրվանից նոր Հայաստանում ենք ապրում» ասում են, նորից, արդեն որերորդ անգամ... Չնայած «հնում» էլ, «նորում» էլ իշխանությունը նույն անունն ունի, իսկ նույնը երբեք նոր չէ:**

**ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ**

# Մայիսի 5-ից բուհերում սկսվել է դիմորդների փաստաթղթերի ընդունման եւ հայտագրման գործընթացը

Մայիսի 4-ին Գնահատման եւ թեստավորման կենտրոնում տեղի ունեցավ ԳԹԿ-ի ներկայացուցիչների եւ ՀՀ պետական եւ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում ձեւավորված ընդունող հանձնաժողովների պատասխանատու քարտուղարների հանդիպումը: Հանդիպման ընթացքում քննարկվեց 2012 թ. բուհում դիմորդների փաստաթղթերի ընդունման եւ հայտագրման գործընթացը:

Դիմորդների փաստաթղթերի ընդունումը եւ մասնագիտությունների հայտագրումը իրականացվելու են սույն թվականի մայիսի 5-ից մինչեւ հունիսի 1-ը (ժամը 18:00):

Դիմորդը կարող է հայտագրել Հայաստանի Հանրապետության մեկ կամ մի քանի պետական եւ մասնավոր բուհերի մինչեւ երկու անվճար եւ ութ վճարովի մասնագիտությունները:

Քննարկվեցին նաեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդների փաստաթղթերի ընդունման եղանակը, փաստաթղթերի ընդունման եւ հայտագրման գործընթացին առնչվող այլ հարցեր:

Այցելելով ԳԹԿ-ի կայքը (www.atc.am)՝ կարող եք ծանոթանալ ՀՀ պետական եւ ոչ պետական բուհերի բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների, ընդունելության քննությունների, անվճար եւ վճարովի տեղերի վարձաչափերին:

http://www.atc.am/files/2012%20dimord/lavash.pdf

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Դիտորդները գոհ են

## *Զեկույցը նախորդ ընտրությունների զեկույցներից ավելի դրական է*



ԵԽԽՎ կարճաժամկետ դիտորդների առաջնորդ եւ համակարգող **Ֆրանսուա-Խավիեր դո Դոնեան** Հայաստանում մայիսի 6-ին խորհրդարանական ընտրությունները դիտարկող միջազգային դիտորդների նախնական գնահատականը ներկայացնելիս անցկացված ընտրությունները բնութագրեց մրցակցային, վառ եւ մեծ մասամբ խաղաղ ընտրարշավով: Դիտորդների գնահատմամբ՝ մինչ քվեարկության օրը քարոզարշավն անցել է բարելավված եւ բարենորոգված իրավական դաշտի պայմաններում, իրականացվել են ընդհանուր առմամբ պրոֆեսիոնալ եւ թափանցիկ կերպով: Դիտորդների գնահատմամբ՝ քվեարկության օրը նույնպես հանգիստ եւ խաղաղ է եղել: Թեպետ եվրոպացիները ընտրությունների ընթացքում նկատել են նաեւ որոշակի կազմակերպչական խնդիրներ ու անհարկի միջամտություններ գործընթացին՝ հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունեցել, ավելին՝ ընտրությունների հետ կապված նրանք տեսել են լուրջ եւ լավատեսական բարեփոխումներ. մասնավորապես հարգանք է դրսեւորվել արտահայտման, հավաքների ազատության եւ ԶԼՄ-ների հանդեպ: Դիտորդների մեկնաբանությամբ՝ Ընտրական նոր օրենսգիրքը ներառում է այնպիսի դրույթներ, որոնք հնարավորություն են տվել Հայաստանին շարժվել դեպի միջազգային պարտավորությունների համապատասխանության ապահովմանը:

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի ընտրությունների դիտորդական առաքելության ղեկավար **Ռադմիլա Շեկիրինսկայի** խոսքերով, դեռ չի մշակվել այնպիսի մեթոդաբանություն, որով որոշվի, թե ընտրակաշառքն ինչպիսի ազդեցություն կարող է թողնել ընտրությունների արդյունքների վրա:

Դոնեան ընտրությունների ընթացքում եղած թերությունները բաժանեց երկու կատեգորիայի՝ անկազմակերպվածություն, մարդկանց կուտակումներ տեղամասերում եւ դիտորդների արձանագրած խախտումները:

Դոնեան վստահ է՝ անկազմակերպվածությունը չէր կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա, եթե հերթերի պատճառով մարդիկ չեն հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց: Ինչ վերաբերում է արձանագրված խախտումներին, ապա եթե որեւէ կուսակցության հետ կապ ունեցող կազմակերպություն համայնքին տրակտորներ է նվիրում կամ բնամթերք տրամադրում հասարակությանը, քիչ հավանական է, որ այդ քայլը չի ազդի մարդկանց ընտրության վրա: Այս հարցում դիտորդները վերջնական որոշման կայացումը թողնում են ԿԸՀ-ին, որպեսզի այդ կառույցը դիտարկի, թե ի՞նչ ազդեցություն են ունեցել նման խախտումներն ընտրությունների արդյունքներ վրա:

ԱՊՀ դիտորդական առաքելությունն էլ անցկացված խորհրդարանական ընտրությունները գնահատում է բաց, թափանցիկ, ժողովրդավարության բոլոր նորմերին համապատասխան: ԱՊՀ գործադիր կոմիտեի առաջին փոխնախագահի եւ առաքելության ղեկավար **Վլադիմիր Գարկունը** երեկ կայացած հանդիպմանը շեշտեց, որ ընտրությունները եւս մեկ քայլ էին Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման գործում: Նրա խոսքերով՝ ստեղծվել էին բոլոր պայմանները, որպեսզի դիտորդները կարողանային մոնիտորինգի ենթարկել նախընտրական գործընթացները: Նա չժխտեց, որ ընտրություններում գրանցվել են որոշ տեխնիկական թերացումներ, սակայն դրանք էական ազդեցություն չեն ունեցել ընդհանուր արդյունքներ վրա:

Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրություններին հետեւել են 647 միջազգային, ինչպես նաեւ տեղական 31.000 դիտորդներ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Շիրակի 4 մեծամասնական ընտրատարածքներից 3-ում ԲՀԿ-ական պատգամավորներ են ընտրվել

**Ավելորդ չլինի՝ նախ այս օրերի մի կարճ զվարճապատում: Ասում են՝ ատարանցին ավտովթարի ենթարկվում եւ անգիտակից վիճակում տեղափոխվում է հիվանդանոց: Երբ այնտեղ ի վերջո աչքերը բացում է, հարցնում է՝ ես այս որտե՞ղ եմ: Պատասխանում են՝ հանրապետականում: Չէ, ասում է, ինձ տարեք «Բարգավաճ»…**

**Բոլոր այս տարիների ընթացքում մեր հասարակության մեջ արմատավորված եւ սերմանված բացասական հույզերն ու երեւույթները, պառակտվածության ու անհանդուրժողականության դրսեւորումները ընտրությունների ժամանակ հատկապես սրվում են: Եվ որքան էլ ընտրատեղամասերում արտաքուստ ամեն ինչ հանդարտ ու հարթ լինի, էլի թվում է՝ զսպանակված ներքին լարվածություն, այնուամենայնիվ, կա:**

**Մայիսի 6-ին Գյումրիում մեր այցելած առաջին՝ 33/72 ընտրատեղամասում առավոտյան ժամը 9-ին արդեն քվեարկության էր եկել մոտ 35-40 ընտրող: Մարդիկ հանգիստ մտնում էին, իրենց քաղաքացիական պարտքը կատարում եւ հեռանում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Հենրիկ Գասպարյանից, հանրապետական կուսակցության վստահված անձից բացի, որոնք մինչեւ այդ պահը գոհ էին ընտրության ընթացքից, երկար զրուցեցինք պատգամավորության ՀՀՇ-ական թեկնածու Շալիկո Զորյանի վստահված անձ Սիլվա Մուրադյանի հետ: Նա նույնպես հաստատեց, որ առայժմ ամեն ինչ նորմալ է ընթանում եւ որեւէ խնդիր չի առաջացել: Տկն Սիլվան մասնավոր զրույցի ժամանակ հպարտանում էր իր կրթված ու հաջողակ երկու որդիներով, որոնք, սակայն, «դրսում» են ապրում, իրարից էլ հեռու, ու ինքը երեքսենյականոց բնակարանում ապրում է մենակ:**

**Այս տեղամասում նկատեցինք մի երկու թերություն, ավելի շատ գուցե տեխնիկական բնույթի: Նախ, մուտքին չկար ընտրական տեղամասի համարը: Եվ մյուսը, նախկին սննդառի գրասենյակի այդ հետերկրաշարժյան կիսաժամանակավոր կառույցի ընձեռած հնարավորությամբ պայմանավորված, ընտրացուցակները բարձր էին փակցված ու փոքր-ինչ հեռու, որը շատ ընտրողների հնարավորություն չէր տալիս իրենց անունն ու համարը գտնել:**

**«Անի» թաղամասում, 11-րդ միջնակարգ դպրոցի միջանցքում էր գործում 34/04 ընտրական տեղամասը, որտեղ մինչ մեր այցը հետաքրքրական մի դրվագ էր եղել: Միջանցքի հենց այն պատին, որի տակ շարված էին ընտրատեղամասային հանձնաժողովի աշխատանքային սեղանները, դպրոցը փակցրած ունեցել է ՀՀ նախագահի եւ Ամենայն հայոց կաթողիկոսի լուսանկարները: Քանի որ դրանք նաեւ հենց ընտրողի դիմաց էին, կարծեմ հեռուստալրագրողն ու դիտորդներից մեկը պնդել էին, որ ընտրատեղամասում ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի լուսանկարի առկայությունը քարոզչություն է, օրենքի խախտում, եւ երկար ընդդիմանալուց հետո տեղամասային հանձնաժողովի նախագահ Մյասնիկ Գեւորգյանը տեղի էր տվել, ու լուսանկարը հանվել էր: Պրն Գեւորգյանը տեղեկացրեց, որ քիչ առաջ տեղամաս են այցելել նաեւ եվրոպացի միջազգային դիտորդներ: Մեր այցի պահին՝ ժամը 14.50-ին, այստեղ ընտրողների արդեն մոտ 30 տոկոս ակտիվություն էր գրանցվել: Իսկ թանաքի հետ կապված հայտնի խնդիրը, հանձնաժողովի նախագահի հավաստմամբ, ժամը 9-ի կողմ կարգավորել են:**

**Այս տեղամասում ԲՀԿ-ի, մեծամասնականով պատգամավորության թեկնածու (ՀՀԿ) Արման Սահակյանի վստահված անձեր Նինա Խաչատրյանը, Համլետ Թադեւոսյանը, «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդ Վոլոդյա Աբրահամյանը քվեարկության ընթացքի վերաբերյալ դժգոհություններ առայժմ չունեին: Մոտավորապես նման պատկեր տեսանք նաեւ Գյումրու մանկավարժական ինստիտուտի շենքում տեղակայված 34/02, ֆրանսիական թեքումով 10-րդ հանրակրթական դպրոցի 35/30 եւ մեր այցելած առանձին այլ տեղամասերում: Մանկավարժականի ընտրատեղամասում դիտորդների համար հատկացված մի երկու դատարկ աթոռի վրա տեսանք ընտրության քարոզչության (ոչ ընտրվողների) նյութեր, որոնք, մեր կարծիքով, լավ կլիներ ամեն տեղ տարածված լինեին: Մեկը ՀՀ դատախազության կարճ հուշաթերթիկն էր՝ ուղղված ընտրողին, մյուսը՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» քարոզչաթերթիկը՝ «Ընտրելու իրավունքն ուժ է» վերտառությամբ, ընտրությունների ու քվեարկության կարգի վերաբերյալ այդ օրն ընտրողին առավել անհրաժեշտ սեղմ գործնական տեղեկատվությամբ եւ ընտրական իրավունքի խնդիրներով անվճար իրավաբանական օգնության «թեժ գծի» 080-080-804 հեռախոսահամարով:**

**Այս տեղամասի հանձնաժողովի նախագահ Անահիտ Գրիգորյանը կարծիք հայտնեց, որ հանձնաժողովի անդամների թիվը նախկին 9-ից 7 դարձնելը առավել ծանրաբեռնվածություն ու աշխատանքի ավելորդ լարվածություն է ստեղծում, մանավանդ երբ այս կամ այն հանձնաժողովականը որեւէ անհրաժեշտությամբ թեկուզ մի քանի րոպե հեռանում է իր աշխատատեղից: Մյուս խնդիրը վատ տեսնող անձանց քվեարկությունն է, որոնք սովորաբար պնդում են, որ իրենց ուզած մարդու, ընտանիքի անդամի օգնությամբ քվեարկեն, եւ ոչ իրենց առաջարկվող պատահական մարդու: Բայց սա, տկն Գրիգորյանի հավաստմամբ, հաղթահարելի խնդիր է:**

**Տարբեր տեղամասերի մուտքի մոտ ընտրողների ցուցակների հետ տեսանք նաեւ ոստիկանների քվեարկության լրացուցիչ ցուցակներ: Նրանց թիվը ամենաշատն էր 34-րդ ընտրատարածքի Անկախության հրապարակում, «Պրոգրես» համալսարանի շենքի մի հատվածում գտնվող ընտրատեղամասում՝ 8 մարդ, որոնցից միայն մեկն էր Շիրակի մարզի բնակիչ, իսկ մյուսները Արարատից ու մեկն էլ Արմավիրից էին: Նրանք հավանաբար այդ օրը Գյումրիում էին ծառայություն անցնում եւ որպես ոչ այստեղի բնակիչներ՝ քվեարկելու էին միայն համամասնական ընտրակարգով: Այս տեղամասում եղանք երեկոյան կողմ, երբ քվեարկության ավարտին մեկ ժամից էլ պակաս էր մնում: Սովորաբար այդ ժամերին որոշակի լարվածություն է լինում, սակայն այստեղ, չնայած տարածքի քիչ նեղությանը (ինչպես մեզ թվաց), նույն հանգիստ մթնոլորտն էր: Դա հաստատեց նաեւ ՀԱԿ-ի վստահված անձ Ռուզաննա Պողոսյանը, ավելացնելով թե՝ ով գալիս է զարմանում է: Այստեղ հանձնաժողովի նախագահը «Ժառանգությունից» էր: Հասմիկ Պետրոսյանը տեղամասային հանձնաժողովների մեզ հանդիպած նախագահներից միակն էր, որ ինքը բողոքեց եւ դժգոհեց կնիքների թանաքի հետ կապված պատմության համար: Այստեղ քվեարկության ավարտին մոտ ընտրել էր ըստ ցուցակի 1754 ընտրողից մոտ 940-ը:**

**Անշուշտ, այսքանը հեռու է Գյումրիում ընտրությունների ամբողջական պատկերը ներկայացնելուց: Քաղաքում եւ Շիրակի մարզում օրվա ընտրական գործընթացը շատ ակտիվ լուսաբանում էին «Շանթ», «Ցայգ», «ԳԱԼԱ» հեռուստաընկերությունները, որոշ էլեկտրոնային լրատվամիջոցներ, որոնք նաեւ ընտրախախտումների ու առանձին միջադեպերի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ եւ տեսանյութեր են ներկայացրել:**

**Գյումրու եւ մարզի ընտրությունների հետաքրքրական արդյունքներից մեկը, ըստ նախնական տվյալների, այստեղի մեծամասնական չորս ընտրատարածքներից երեքում ԲՀԿ-ական պատգամավորների ընտրությունն է:**

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի


## Հիպոթեքային վարկեր ԱՌԱՆՑ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ



*Զարգացման Հայկական Բանկը բնակարանի ձեռքբերումը հասանելի է դարձրել գրեթե բոլորին, նաև այն անձանց, ովքեր չունեն կանխավճարային միջոցներ:*

Այսօր շատ շատերն են դիմում բանկերին՝ առանց կանխավճարի հիպոթեքային վարկ ձեռք բերելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատերը վճարունակ են, ունեն աշխատանք, կայուն եկամուտներ, բավարար գրավի առարկա, բայց չունեն կուտակված գումար՝ կանխավճար կատարելու համար: Այս խմբին են պատկանում հատկապես շատ երիտասարդ, նորաստեղծ ընտանիքներ: Միշտ նորարարական լուծումներ առաջարկող եւ հաճախորդի շահերը գերադասող Զարգացման Հայկական Բանկը հիփոթեքային շուկայի առանձնահատկություններից ելնելով՝ այսօր արդեն հաճախորդներին առաջարկում է նոր հիփոթեքային վարկատեսակ՝ «**Հիփոթեքային վարկ առանց կանխավճարի**»:

Մեր առաջարկած հիպոթեքային վարկերից կարող է օգտվել Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի: Վարկը **լրացուցիչ գրավի առկայության** պարագայում հնարավորություն է ընձեռում ձեռք բերել անշարժ գույք առանց կանխավճարի՝ ստանալով վարկ ձեռք բերվող անշարժ գույքի գնահատված արժեքի մինչև **100%-ի չափով**: Առանց կանխավճարի հիպոթեքային վարկերը տրամադրվում են մինչև 10 տարի մարման ժամկետով, մինչև 100 մլն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի գումարի չափով, տարեկան տոկոսադրույքը՝ 12-18%: Ընդ որում վարկ/գրավ (ձեռք բերվող անշարժ գույք և լրացուցիչ անշարժ գույք) առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 60%:

Զարգացման Հայկական Բանկն այս վարկատեսակի տրամադրումն արդեն սկսել է. դիմեք Զարգացման Հայկական Բանկ եւ օգտվեք այս բացառիկ շահավետ վարկատեսակից եւ ունեցեք ձեր բնակարանը, առանձնատունը կամ ցանկացած անշարժ գույք:




**«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ**
**Մանրամասների համար՝**
**Տեղ. հեռախոս՝ 59 15 15**
**www.armdb.com**
**info@armdb.com**

ԱԶԳ



# Աթաթուրքը՝ դիմակազերծված

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Պատմական քիչ ծանոթ մի իրադարձություն մեծ նշանակություն ունի բացահայտելու եւ սահմանելու ներկայիս թուրքական հանրապետության ցեղասպանական գաղափարախոսությունը: Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում Թուրքիան օժանդակում էր նացիստական Գերմանիայի ռազմական ջանքերին՝ հումք մատակարարելով նրա մարտական մեքենային: Ի գնահատումն այդ օժանդակության՝ Հիտլերը թույլատրեց Բեռլինում 1921 թվին սպանված իր հոգեհարազատ ընկերոջ՝ Թալեաթ փաշայի աճյունը տեղափոխել Թուրքիա, որտեղ Ստամբուլի «Ազատության բլուր» («Հյուրիեթ թեփե») կոչված հատվածում հուշարձան կանգնեցվեց, որպեսզի բոլոր ցեղասպան թուրքերն այցելեն ու հարգեն 20-րդ դարի մեծագույն հանցագործներից մեկի հիշատակը: Այդ հուշարձան-դամբարանը այսօր էլ կանգուն է՝ խորհրդանշելով թուրքերին եւ հանուն Թուրքիայի զոհված մարտիկներին:

Երբ պատմաբանները ժամանակակից Թուրքիայի Հանրապետությանը հաշվետու եւ պատասխանատու են համարում որպես մեկուկես միլիոն հայերի բնաջնջման հետեւանքում առաջացած ավարի ժառանգորդ-պետության, նրանք պարտավոր են նաեւ անդրադառնալ Թալեաթ փաշայի այդ հուշարձանի խորհրդանշանակությանը:

Թուրքիայի ներկա առաջնորդները չեն կարող խուսափել պատասխանատվությունից, որովհետեւ ժառանգել են ինչպես պատմական Հայաստանի տարածքը, այնպես էլ անզեն մի ողջ ազգաբնակչություն կոտորելու հետեւանքով առաջացած արյան գինը:

Բարեբախտաբար, որոշ թուրք գիտնականներ, գրողներ եւ լրագրողներ ընդունում են այն փաստը, որ թուրքերի ներկա սերունդը իր ուսերի վրա մի հսկայական պատմական բեռ ունի տանելու: Այդ գրողներից մեկը՝ Աիշե Հյուրը, վերանայելով այն, ինչ դպրոցում պատմության ժամերին սովորեցրել են իրեն, «Ռադիկալ» թերթում հրատարակել է մի հոդված, որտեղ դիմակազերծ է անում Աթաթուրքի՝ ժամանակակից Թուրքիայի Հանրապետության հիմնադրի ցեղասպանական քաղաքականությունը:

Պատմաբան Թաներ Աքչամն իր հիմնավոր ուսումնասիրությունների միջոցով պարզել է, որ իթթիհատական կառավարության բազմաթիվ պաշտոնյաներ, որոնք գործադրել էին Թալեաթի հրամանները, հետագայում միացան Աթաթուրքի ազգային շարժմանը, որն էլ հիմքը դրեց Թուրքիայի Հանրապետության ստեղծման: Աթաթուրքն իր հերթին, որպես երիտասարդ զինվորական, միացել էր Թալեաթի «Միություն եւ առաջադիմություն» կուսակցությանը եւ նշանակալի դերակատարություն ունեցել երիտթուրքերի 1908 թվի հեղափոխության գործընթացում, որը տապալեց սուլթանի իշխանությունը: Որպես զինվորական էլ նրա ձեռքերը մաքուր չէին: Նա մասնակցել էր գաղութարարական պատերազմների՝ ապստամբությունների միջոցով տապալելու օսմանյան իշխանությունը Ալբանիայում (1910 թ.) եւ Բալկաններում (1912-13 թթ.): Գաղութարարական պատերազմներ էր մղել նաեւ ընդդեմ հայերի Կիլիկիայում (1921 թ.) եւ ընդդեմ հույների Զմյուռնիայում (1922 թ.):

Ընթերցելով արեւմտյան գիտական եւ լրագրողական աղբյուրները՝ մարդ միայն հարգանք ու պատկառանք է տածում այդ մարդու՝ Աթաթուրքի նկատմամբ: Այնտեղ ոչ մի խոսք չկա նրա ազգայնամոլական քաղաքականության եւ դաժան ոճրագործությունների մասին: Միայն փառաբանական խոսքեր են, որոնք բնութագրում են նրան որպես բարենորոգիչ եւ զինվորական առաջնորդի: Համացանցում տեղադրված BBC-ի տեղեկագրում, օրինակ, կարդում ենք. «Նա (Աթաթուրքը) առաջ քաշեց Թուրքիան արդիականացնելու սոցիալ-քաղաքական բարեփոխումների հեղափոխական մի ծրագիր, որը նախատեսում էր կանանց ազատագրում, բոլոր տեսակի իսլամական կառույցների վերացում, արեւմտյան իրավական օրենքների, հագուստի եւ օրացույցի ներմուծում, ինչպես նաեւ արաբական այբուբենի՝ լատինականով փոխարինում»:

Թուրքերին հպարտության զգացում ներշնչելու նպատակով նա մտահղացավ շրջանառության մեջ դնել ազգայնամոլական կարգախոսներ, որոնցից մեկը մինչեւ օրս պարտադիր պետք է հնչի բոլոր դպրոցներում, ներառյալ փոքրամասնությունների կրթական օջախներում. «Հպարտ պետք է զգա նա, ով թուրք է»: Նման կարգախոսները թուրքերի շրջանում ռասայական գերակայության զգացումներ են առաջացրել, միեւնույն ժամանակ անլիարժեքության եւ վախի զգացումներ առաջացնելով փոքրամասնությունների երեխաների մեջ: Ավելին, չնայած նա 1925-ին հրապարակեց «Գլխարկի օրենքը» եւ պարտադրեց, որ թուրքերը ֆեսի փոխարեն կրեն արեւմտյան ոճի գլխարկներ, նա չկարողացավ այնուամենայնիվ փոխել այն, ինչ գտնվում էր այդ գլխարկի տակ, որովհետեւ նրան չէր հետաքրքրում դա: Աիշա Հյուրը հրամանների, օրենքների եւ կարգադրությունների մի երկար շարան է հրատարակել, որոնք Աթաթուրքին բնորոշում են որպես ռասիստական առաջնորդի: Դրանցից միայն մի քանիսի մատնանշումը բավական է պատկերացում կազմելու թուրքերի հայր հորջորջված անձնավորության բարենորոգչական աշխատանքների մասին:

Այսպես, 1923 թվի մարտի 16-ին Ադանայում, խոսելով մի խումբ թուրք գործարարների հետ, Մուստաֆա Քեմալը (Աթաթուրքը) ասել է. «Վերջապես այս երկիրը վերադարձավ իր տերերին: Հայերն ու մյուս բոլոր ազգությունները իրավունքներ չունեն այստեղ: Այս բերրի հողերը պատկանում են միայն իսկական թուրքերին»: Իսկ 1923 թվի հունիսին հրապարակված կարգադրության հատկանիշներով բոլոր հրեաներին, հույներին եւ հայերին ազատեցին կառավարական եւ մասնավոր հաստատություններում իրենց աշխատանքներից եւ արգելեցին նրանց շրջագայությունները Անատոլիայում: 1924 թվի ապրիլի 3-ի օրենքով էլ բոլոր հրեա, հույն եւ հայ փաստաբաններին զրկեցին իրենց կոչումներից եւ իրավական բոլոր տեսակի գործունեությունները վերապահեցին բացառապես թուրքերին:

Այնուհետեւ, 1926 թվի օգոստոսի 1-ի օրենքով կարգադրվեց առգրավել փոքրամասնությունների այն բոլոր ունեցվածքը, որ ձեռք էր բերվել նախքան Լոզանի պայմանագրի կիրառումը (1924 թ. օգոստոսի 23-ը): 1930 թվի սեպտեմբերի 18-ին արդարադատության նախարար Մահմուդ Էսատ Պոզկյուրդը Էոդիմիսի շրջանում հայտարարեց. «Հավատացած եմ, որ այս երկիրը, այս հողը ինքնին թուրքական է: Ովքեր իսկական թուրքեր չեն եւ ցանկանում են ապրել այս երկրում, կարող են մնալ միայն որպես ծառաներ կամ ստրուկներ»: Սա է արդարադատության թուրքական տարբերակը: Նման վերաբերմունքն, ինչ խոսք, փոքրամասնություններին վերածեց իսկական «ռայաների» (ստրուկների)՝ մի կարգավիճակ, որ նրանք «վայելում» էին սուլթանների ժամանակաշրջանում:

Իսլամական խորհրդանշաններին վերջ տալով՝ քեմալիստները փաստորեն բազմապատկեցին փոքրամասնությունների նկատմամբ մահմեդականների եւ թուրքերի ունեցած գերակա իրավունքները:

Այնպես որ դժվար չէ նկատել այն կարմիր գիծը, որն, անցնելով Թուրքիայի ամբողջ պատմության միջով, սկսած սուլթաններից մինչեւ երիտթուրքեր եւ Աթաթուրք, այսօր էլ շարունակվում է նույնությամբ կրկնվել Թուրքիայի ներկա հանրապետության սահմաններում:

Ռասիստական այս օրենքները դեռեւս պահպանված են ժամանակակից Թուրքիայում: Դրանք, սակայն, ծածկագրված են: Ի՞նչ է, օրինակ, թուրքականությունը պաշտպանելու քրեական օրենքի 301 հոդվածը, եթե ոչ մի ուժ՝ լռեցնելու այլախոհներին եւ առաջին հերթին նրանց, ովքեր կհամարձակվեն արտասանել «ցեղասպանություն» բառը: Այս հոդվածի հատկանիշներով են Թուրքիայի իշխանությունները հետապնդում եւ դատական գործեր հարուցում Օրհան Փամուքի, Ռագըփ Զարաքօլուի, Հրանտ Դինքի եւ այլ մտավորականների ու լրագրողների դեմ:

Պատճառը, թե ինչու այս ժամանակավրեպ օրենքներն ու միտումները դեռեւս շարունակում են գոյատեւել, այն է, որ բանակն իր վրա է վերցրել քեմալիզմի կամ Աթաթուրքի ժառանգությունը պաշտպանելու պարտականությունը: Այո, չընտրված, ինքնագլուխ մի խունտա պարզապես հետամուտ է լինում այդ օրենքների հարատեւմանը: Մտավորականների եւ լրագրողների թույլ ձայները բավարար չեն վերափոխելու Թուրքիան: Դրանց պետք է միանան Եվրոմիության ճնշումները: Եվրոմիության դռները բացվելու են եւ հյուրընկալելու են Թուրքիային, հենց որ վերջինս ձեռք բերի քաղաքակրթված երկրի հարգարժան մակարդակ: Եվ միայն այդ դեպքում է, որ Թուրքիան կկարողանա խիզախորեն առերեսվել իր նողկալի անցյալի հետ:

Մենք հույս ունենք, որ այդպիսի Թուրքիայի հետ գործ կունենանք հետագայում:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ. Հ. Ծ.

# Արսեն Ավագյանի աշխատությունը կարեւոր նշանակություն ունի ոչ միայն թուրքագիտության եւ կովկասագիտության, այլեւ՝ հայագիտության համար

Պատմագրության մեջ առաջնահերթ նշանակությամբ ուսումնասիրվում են այն թեմաները, որոնք ուղղակի են առնչվում տվյալ ժողովրդի պատմությանն ու ազգային խնդիրներին: Այդ առումով հայ պատմագրությունը բացառություն չի կազմում, սակայն որեւէ պատմական հարցի լիարժեք լուսաբանումը պայմանավորված է լինում նաեւ թեմային անուղղակի առնչվող խնդիրների ուսումնասիրությամբ: Թերեւս պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ արտգործնախարարության Թուրքիայի բաժնի վարիչ **Արսեն Ավագյանի «Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971 թթ.)»** մենագրությունը մեր ժողովրդի պատմությանն ու ազգային խնդիրներին անուղղակի առնչվող ուսումնասիրություններից է՝ նվիրված հայ պատմագրության մեջ դեռեւս չուսումնասիրված մի թեմայի:




Ինչ խոսք, թերթի տարողունակությունը սահմանափակում է մենագրությունը լիարժեք ներկայացնելու հնարավորությունը: Սակայն մինչ այս մենագրությանն անդրադառնալը, նշենք Արսեն Ավագյանի «Չերքեզները Օսմանյան կայսրության եւ քեմալական Թուրքիայի պետաիրավական համակարգում. XIX դ. առաջին կեսից XX դ. առաջին քառորդը» եւ «Հայերն ու «Միություն եւ առաջադիմություն» կուսակցությունը. համագործակցությունից՝ հակամարտություն» ծավալուն աշխատությունների մասին:

Այս երկու աշխատություններն էլ, ցավոք, հայերեն հրատարակված չեն: Փոխարենը թուրքերեն են լույս տեսել: Աշխատություններից առաջինը 2004-ին Ստամբուլում հրատարակել է Ռագըփ Զարաքօլուի «Բելգե» հրատարակչությունը: Աշխատության մեջ հեղինակը ուսումնասիրում է աբդուլհամիդյան շրջանի հայկական ջարդերը, Հայոց ցեղասպանության շարունակականությունը ինչպես երիտթուրքերի, այնպես էլ՝ քեմալականների օրոք եւ գիտական հարուստ նյութի հիման վրա ներկայացնում է ջարդերում եւ ցեղասպանության մեջ չերքեզների ստանձնած անփառունակ դերն ու նրանց ակտիվ մասնակցությունը քեմալականների ազգային պատերազմներին:

Այս աշխատությունը լայն արձագանք է գտել Թուրքիայում, արժանացել է չերքեզների Հյուսիսկովկասյան մշակութային միության պատվոգրին: Աշխատությունը գրախոսել են այնպիսի հանրաճանաչ թուրք հեղինակներ, ինչպիսիք են Ջենգիզ Չանդարը, Մեթե Թունջայը, Սաիդ Ալի Չեթինօղլուն, նրանց հետ նաեւ գերմանացի, ռուս եւ անգլիացի պատմաբաններ:

Արսեն Ավագյանի երկրորդ աշխատությունը 2005-ին Ստամբուլում լույս է ընծայել «Արաս» հրատարակչությունը: Աշխատության համահեղինակը մեր ֆրանսաբնակ հայրենակից **Կայծ Մինասյանն** է: Նա գրի է առել աշխատության երկրորդ **«Միություն եւ առաջադիմություն» կուսակցությունն ու Հայ հեղափոխական դաշնակցության հարաբերությունները Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին» ենթավերնագրով մասը, իսկ Արսեն Ավագյանը առաջին՝ «Հայկական քաղաքական կուսակցությունների հարաբերությունը «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության հետ»** մասը, որտեղ հեղինակը մանրամասն լուսաբանում է սահմանադրական կարգերի հռչակումը Օսմանյան կայսրությունում, Ադանայի ջարդերը, բարեփոխումների ծրագիրն ու երիտթուրքերի հետ հայկական կուսակցությունների հարաբերություններում առկա ելեւէջներ:




Ինչ վերաբերում է Արսեն Ավագյանի «Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում» մենագրությանը, ապա դա ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի խորհրդի որոշմամբ, 2011-ին լույս է տեսել Երեւանում: Պատասխանատու խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը:

Աշխատությունը 343 էջ է, ունի առաջաբան, վերջաբան, ինչպես նաեւ օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկ, որն աչքի է ընկնում թուրքական գրականության առատությամբ՝ պայմանավորված հեղինակի թուրքերեն իմացությամբ: Այս հանգամանքը առանձնակի նշանակություն է հաղորդում Արսեն Ավագյանի նաեւ նախորդ աշխատություններին, հատկապես դրանք կարեւորում է հայկական ջարդերին եւ Հայոց ցեղասպանությանը չերքեզների ակտիվ մասնակցությամբ, ինչպես նաեւ երիտթուրքերի հետ հայկական կուսակցությունների, մասնավորապես՝ Հայ հեղափոխական դաշնակցության հարաբերությունների լուսաբանման առումով:

Արսեն Ավագյանի մենագրությունը կազմված է 3 գլուխներից: Առաջինում նա բարձրացնում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են երիտթուրքերի եւ քեմալական ազգայնականների կովկասյան քաղաքականության մեջ լեռնականների օգտագործման ավանդույթը 1908-1920 թթ., Կովկասից մահմեդականների զանգվածային գաղթ կազմակերպելու խնդիրը 1920-1921 թթ. ռուս-թուրքական բանակցություններում, 1921-1922 թթ. Թուրքիայում ստեղծված առաջին հյուսիսկովկասյան վտարանդիական քաղաքական կազմակերպությունները:

Թեեւ այս կազմակերպությունները 1923 թ. Թուրքիայում հանրապետական կարգերի հռչակումից հետո փակվել են, բայցեւայնպես, Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ շարունակել է այս գործոնը օգտագործել ԽՍՀՄ-ի, իսկ հետխորհրդային շրջանում՝ Ռուսաստանի Դաշնության դեմ: Այլ կերպ, գրախոսվող մենագրությունը բացի բոլշեւիկների եւ քեմալականների առնչությունից, կարեւոր ներդրում է խորհրդա-թուրքական եւ ռուս-թուրքական հարաբերությունների ուսումնասիրության համար: Քանի որ խորհրդային տարիներին Հայաստան-Թուրքիա հարաբերությունները միջնորդավորված են եղել Մոսկվայի հետ, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո՝ Ռուսաստանի Դաշնությունը դարձել է Հայաստանի ռազմաքաղաքական դաշնակիցը, ուստի Արսեն Ավագյանի «Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում» մենագրությունը անուղղակի առնչվում է Մոսկվայի հետ Հայաստանի ինչպես խորհրդային, այնպես էլ՝ հետխորհրդային շրջանի հարաբերություններին: Այս ամենը առանձնակի կարեւորվում է աշխատության նշանակությունը բացի թուրքագետներից եւ կովկասագետներից, նաեւ հայագետների համար:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

# Վլադիմիր Պուտինի երդմնակալության արարողությունը Կրեմլում



Երեկ՝ մայիսի 7-ին, անսովոր շուք եւ փայլ ստացած Կրեմլի պալատում տեղի ունեցավ ՌԴ նորընտիր նախագահ Վլադիմիր Պուտինի երդման արարողությունը:

Եռանդուն եւ մարզիկի կոփվածքով 59-ամյա Պուտինը, որը վստահորեն հաղթանակ տարավ մարտի 4-ին կայացած նախագահական ընտրություններում ՝ հավաքելով ավելի քան 63 տոկոս, փոխարինեց 46-ամյա Դմիտրի Մեդվեդեւին:

Երդմնակալության արարողությունը Պուտինի համար թեեւ երրորդն էր, սակայն նա առաջին անգամ ստանձնեց պաշտոնը վեց տարով, քանի որ 2008 թվականին փոփոխություններ կատարվեցին սահմանադրության մեջ, որոնց համաձայն՝ նախագահին այժմ ընտրվում է ոչ թե չորս, այլ վեց տարով,

Վլադիմիր Պուտինը երկիրը ղեկավարել է նաեւ 2000-2008 թվականներին՝ երկու անգամ ընտրվելով նախագահ: Այս անգամ Պուտինը նախագահի պաշտոնում կմնա մինչեւ 2018 թվականի մայիս:

Արարողակարգի համաձայն՝ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը Կրեմլի պալատում դիմավորեց հետնորդին, որը Կրեմլ ժամանեց ՌԴ կառավարությունից:

Արարողությանը հրավիրվել էր մոտ 3000 մարդ: Նրանց թվում էին Ռուսաստանի Դաշնության կառավարության, Պետդումայի ու Դաշնային խորհրդի անդամներ, Սահմանադրական դատարանի դատավորներ, պետական մարմինների այլ ներկայացուցիչներ: Ներկա էին Պուտինի նախընտրական շտաբի վստահված անձինք, դիվանագիտական, գիտական, մշակութային, հասարակական գործիչներ:

Հրավիրվածների թվում էին նաեւ բարձրաստիճան պաշտոնյաներ, գեներալներ, հոգեւորականներ, մշակույթի, գիտության, սպորտի գործիչներ, ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Լրագրողները հատկապես մեծ ուշադրություն դարձրին բարձրաստիճան հյուրերի հագուկապին եւ զգեստներին. տղամարդիկ կրում էին մուգ կոստյումներ, իսկ կանայք՝ «սովորական երկարության» զուսպ զգեստներ, զինծառայողները՝ տոնական համազգեստ:

Երդմնակալության արարողությունը սկսվեց կեսօրին եւ տեւեց մոտ 40 րոպե:

Այն սկսվեց Կրեմլի Սոբորնայա հրապարակում՝ գործող նախագահ Դմիտրի Մեդվեդեւի՝ նախագահական գնդին հրաժեշտով:

Կրեմլի պալատի Անդրեեւսկի դահլիճում Մեդվեդեւը նորընտիր նախագահին փոխանցեց նախագահական իշխանության խորհրդանիշը:

Աջ ձեռքը դնելով Սահմանադրության վրա՝ Պուտինն ասել է. «Երդվում եմ Ռուսաստանի Դաշնության նախագահի պարտականություններն իրականացնելիս հարգել եւ պահպանել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, հետեւել եւ պաշտպանել ՌԴ սահմանադրությունը, պաշտպանել պետության անկախությունը, անվտանգությունը եւ ամբողջականությունը, հավատարիմ ծառայել ժողովրդին»:

Պուտինի երդումից հետո Սահմանադրական դատարանի նախագահ Վալերի Զորկինը նրան հայտարարեց ՌԴ նախագահ, որից հետո նվագախումբը եւ երգչախումբը կատարեցին Ռուսաստանի հիմնը:

Նոր նախագահի երդում տալուց հետո Դմիտրի Մեդվեդեւը, որ 4 տարի ղեկավարել էր երկիրը, դադարեց կատարել պետության ղեկավարի պարտականությունները:

Պուտինին՝ որպես ՌԴ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի, փոխանցվեց ռազմավարական միջուկային ուժերի կառավարումը:

Արարողության ավարտից հետո Կրեմլի Սոբորնայա հրապարակում տեղի ունեցավ նախագահական գնդի միջոցառումը, որը երեկ տոնում էր նաեւ իր ձեւավորման 76-րդ տարեդարձը:

Երդմնակալության արարողությունը ուղիղ հեռարձակում էին վեց հեռուստաալիքներ: Ողջ աշխարհի կիզակետում հայտնված այդ իրադարձությունը հեռարձակվում էր նաեւ անգլերեն, արաբերեն եւ իսպաներեն լեզուներով, իսկ համացանցի օգտատերերը ողջ աշխարհում հնարավորություն ունեցան online ռեժիմով հետեւելու այդ հանդիսությանը, որը հասանելի էր նաեւ YouTube-ում:

Երդմնակալության արարողությանը պետական բյուջեից հատկացվել էր 26 մլն ռուբլի: Ռուսաստանի 4-րդ նախագահի երդման արարողությունը որեւէ սկզբունքային փոփոխության չի ենթարկվել եւ ընթացավ նույն սցենարով, ինչպես 2000-ին, 2004-ին եւ 2008-ին:

Վլադիմիր Պուտինը, ստանձնելով Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնը՝ մի քանի ժամ անց արդեն Պետդումային է ներկայացրել արդեն նախկին նախագահ Դմիտրի Մեդվեդեւի թեկնածությունը կառավարության ղեկավարի պաշտոնի համար:

Ընդդիմադիր ուժերի կողմնակիցները փորձել են Պուտինի երդման օրը Մոսկվայի կենտրոնում բողոքի ակցիա կազմակերպել, սակայն ոստիկանությունը ցրել է նրանց:

**ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ**
**Մոսկվա**

ՓԱՐԻԶ

# Օլանդը դարձավ Ֆրանսիայի նախագահ

*Սարկոզին կթողնի քաղաքականությունը*

**Ֆրանսիայի նախագահական ընտրությունների երկրորդ փուլում՝ մայիսի 6-ին մրցում էին գործող նախագահ, աջ կենտրոնամետ ուժերի թեկնածու Նիկոլա Սարկոզին եւ Սոցիալիստական կուսակցության թեկնածու Ֆրանսուա Օլանդը: Երկուսն էլ 57 տարեկան են: Ընտրություններն ավարտվել են Օլանդի հաղթանակով: Ֆրանսիան 17 տարի սոցիալիստ նախագահ չէր ունեցել:**

**Ընտրությունների արդյունքների համաձայն, Ֆրանսուա Օլանդը ստացել է բոլոր քվեների 51,67 տոկոսը, Նիկոլա Սարկոզին՝ 48,33 տոկոսը:**

**Քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցողների 80,4 տոկոսը, հաղորդում է RFI ռադիոկայանը:**

**Հինգերորդ հանրապետությունում Օլանդը երկրորդ սոցիալիստ նախագահն է Ֆրանսուա Միտերանից հետո: Սարկոզին երկրորդ գործող նախագահն է (Վալերի Ժիսկար դ' Էստենից հետո), որը չկարողացավ վերընտրվել: Միտերանը նախագահ էր ընտրվել 1981-ին:**

**Օլանդի հաղթանակից հետո նրա կողմնակիցների բազմությունը հավաքվել է Փարիզում՝ Բաստիլի հրապարակում:**

**Նիկոլա Սարկոզին ընդունել է իր պարտությունը նախքան պաշտոնական տվյալների հրապարակումը: Նա հեռախոսով զրուցել է Ֆրանսուա Օլանդի հետ եւ նրան մաղթել է հաջողություն, ապա Փարիզում ելույթ է ունեցել իր կողմնակիցների առջեւ:**

**«Ֆրանսիայում ընտրված է նոր նախագահ: Դա ժողովրդավարական ընտրություն է, հանրապետական ընտրություն: Ֆրանսուա Օլանդը Ֆրանսիայի նախագահն է, նրան պետք է հարգել: Ես հեռախոսով նրա հետ զրուցեցի եւ հաջողություն մաղթեցի այս բարդ ժամանակներում: Դժվար կլինի, բայց ի սրտե մաղթում եմ, որ մեր երկիրը՝ Ֆրանսիան, պատվով անցնի այդ փորձությունները», մասնավորապես հայտարարել է Նիկոլա Սարկոզին:**



**Նա որոշել է չմասնակցել խորհրդարանական ընտրություններին եւ թողնել քաղաքականությունը: Սարկոզին նախապես հայտարարել է, որ պարտվելու դեպքում հենց այդպես կվարվի: Սարկոզին Ելիսեյան պալատը պետք է թողնի մինչեւ մայիսի լույս 16-ի գիշերը, երբ լրանում է այնտեղ նրա կեցության ժամկետը:**

# Առաջին ժողովրդավարական ընտրությունները Սիրիայում

*Ընդդիմությունը բոյկոտեց դրանք*



**Սիրիայում ապրիլի 12-ից գործող, բայց մերթ ընդ մերթ խախտվող հրադադարի պայմաններում մայիսի 7-ին անցկացվել են առաջին ժողովրդավարական ընտրությունները. փետրվարին երկրում չեղյալ էր հայտարարվել միակուսակցական համակարգը: Ֆրանս պրեսը հաղորդում է, որ խորհրդարանի 250 տեղերի համար պայքարում էին 7195 թեկնածու, այդ թվում՝ 710 կին: Ընդգծվում է, որ 250 տեղերից 127-ը հատկացվում է քաղաքային եւ գյուղական աշխատավորության ներկայացուցիչներին:**

**Հորդանանյան Baldana կայքէջը իր հերթին հաղորդում է սիրիական հրթիռային համակարգերի տեղաշարժերի մասին: Արեւմտյան հատուկ ծառայությունների տվյալներ վկայակոչելով՝ կայքէջը նշում է, որ «Սքադ» հրթիռների արձակման կայանքները տեղաշարժվել են դեպի Թուրքիայի եւ Իսրայելի սահմանները:**

**Ավելի վաղ Սիրիայի նախագահ Բաշար Ասադի վարչակազմի ներկայացուցիչը հայտարարել էր, թե արտաքին ռազմական միջամտության դեպքում Սիրիան կհրթիռակոծի Թուրքիայի եւ Իսրայելի տարածքները:**

# Ցեղասպանության 97-ամյակի հիշատակում եբրայական համալսարանում

**Չնայած Իսրայելի պետությունը պաշտոնապես դեռ չի ճանաչում հայերի ցեղասպանությունը, ամեն տարի եբրայական համալսարանի հայկական ուսումնասիրությունների ծրագրի շրջանակներում տեղի է ունենում հուշ-երեկո նվիրված Մեծ եղեռնի անմեղ զոհերին: Այս տարվա միջոցառումը, ըստ Ասիա Բերեզնյակից ստացված հաղորդագրության, կայացել է ապրիլի 22-ին, համագործակցությամբ Ցեղասպանության կանխարգելման երուսաղեմյան կենտրոնի:**

**Հիշատակի հանդիսությունը սկսվել է Եզեկիելի մարգարեության հուսո պատգամով, որը եբրայերենով կարդացել է Նաիրա Մանուկյանը, իսկ հայերենով՝ Յոավ Լոեֆը: Զոհերի հիշատակին նվիրված մի րոպե լռությունից հետո Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը հրապարակել է Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի ուղերձը եւ ընդգծել Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության կարեւորությունը Իսրայելի կառավարության կողմից:**

**Նրան այդ հարցում պաշտպանել է Քնեսեթի անդամ Զեւուլոն Օրլեւը, որը միջոցառմանը ներկա հրեաներին դիմելով ասել է, որ ոչ մի քաղաքական շահ չպետք է գերակշռի ցեղասպանության ճանաչման բարոյական անհրաժեշտությանը: Նա ցավ է հայտնել, որ ցարդ Իսրայելի իրարահաջորդ կառավարությունները վճռականորեն չեն ձեւակերպել ճանաչման բանաձեւը:**

**Այնուհետեւ խոսք է առել Երուսաղեմում ՀՀ դեսպան Ցոլակ Մոմճյանը, որը պատմել է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին նվիրված գորգի մասին, պատրաստված հայ որբ աղջիկների ձեռամբ: Նա ավելացրել է, որ այժմ բանակցություններ են տարվում, որպեսզի այդ գորգը պատշաճորեն ցուցադրվի Վաշինգտոնում:**

**Ելույթ է ունեցել նաեւ եբրայական համալսարանի հայկական ուսումնասիրությունների ծրագրի հիմնադիր, պրոֆ. Մայքլ Սթոունը, որն անդրադարձել է հայկական մշակութային կորուստներին: Նա նաեւ կարդացել է համալսարանի հումանիտար առարկաների ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռուվեն Ամիտայի եւ Երեւանի պետհամալսարանի ռեկտոր, պրոֆ. Արամ Սիմոնյանի ողջույնի խոսքերը:**

**Իր հերթին իսլամական եւ մերձավորարեւելյան ուսումնասիրությունների բաժնից դոկտ. Մորդիքեյ Զաքեն խոսել է օսմանյան տիրապետության ժամանակներում փոքրամասնություններին սպառնացող վտանգի մասին եւ կոչ արել կառավարությանը՝ ճանաչել հայերի ցեղասպանությունը:**

**Ցեղասպանության կանխարգելման երուսաղեմյան կենտրոնը դոկտ. Յաէլ Շտեյնի եւ Թամար Փիլեջիի միջոցով ներկայացրել է պրոֆ. Իսրայել Չառնիի զեկուցագիրը՝ Իսրայելի խորհրդարանի կրթության հանձնաժողովում ցեղասպանության ճանաչման ուղղությամբ տարված աշխատանքների վերաբերյալ:**

**«Combat Genocide» երիտասարդական խմբակցության ներկայացուցիչը կարեւորել է անցյալ եւ ներկա ցեղասպանությունների ճանաչումը որպես անհրաժեշտ քայլ՝ կանխարգելելու հետագա վայրագությունները ընդդեմ մարդկության:**

**Երեկոյի ամբողջ ընթացքում մեծ տեղ է հատկացվել նաեւ հայկական մշակույթին: Պատրիարքարանի երգչախմբի գեղարվեստական ղեկավար հայր Հուսան Ալջալյանը ներկայացրել է պատարագից երկու երգ, իսկ պրոֆ. Սթոունը արտասանել է հայերին ու Մեծ եղեռնին նվիրված բանաստեղծություններ:**

Հ. Ծ.

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# Վահե-Վահյանի նամակների ժողովածուն գրականագիտական կարեւոր նշանակություն ունի

ՀԳ միության VI համաժողովն ավարտվել է, սակայն որոշ կարեւոր շնորհանդեսներ են անցկացվում այս օրերին: Դրանց թվում էր նաեւ լիբանանահայ արձակագիր, մշակութային եւ հասարակական գործիչ Արամ Սեփեթճյանի խմբագրած եւ հրատարակած Վահե-Վահյան «Բանաստեղծին սիրտը» նամակների ստվարածավալ ժողովածուն: Շնորհանդեսը բացեց ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը ասելով. «Աշխարհի գրականությունը այսօր նորագույն տեխնիկայի շնորհիվ կորցնում է գրական մի շատ կարեւոր ժանր՝ նամակագրությունը: Եվ ահա կարծես վերջին մոհիկանն այսօր մեզ է ներկայացվում ու վերադարձվում մանկավարժի, հրապարակագրի, ազգային-հասարակական գործչի, անվանի բանաստեղծի, խմբագրի ու հրատարակչի «Բանաստեղծին սիրտը» Վահե-Վահյանի նամակների ժողովածուն»:



Սփյուռքի գրականության վեմերից մեկը հանդիսացող Վահե-Վահյանի ծավալած բեղուն գործունեության, թողած ժառանգության մասին գոհունակությամբ արտահայտվեցին ու Վահե-Վահյանի ներդրումն ու վաստակը բարձր արժեւորեցին ձեռնարկը վարող «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի ղեկավար Սուրեն Դանիելյանը, գրականագետներ Ազատ Եղիազարյանը, Վազգեն Գաբրիելյանը, Սամվել Մուրադյանը, Հայաստանի ՀԲԸՄ գրասենյակի ժամանակավոր տնօրեն Հովիկ Եորդեկյանը, պատմաբան Գեւորգ Յազըճեանը (Վահե-Վահյանի սան), գրող, հասարակական գործիչ Մանվել Ադամյանը (Լոնդոն) եւ այլք:

Վահե-Վահյանի նամականին, որը 766 էջից է բաղկացած, Արամ Սեփեթճյանը բացի խմբագրելուց գրել է նաեւ առաջաբանը: 1,5 տարվա բարդ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ այսօր հայ գրականության պատմությունը հարստացավ եւս մեկ կարեւոր գրականագիտական, հանրագիտարանային արժեք ունեցող ծավալուն ժողովածուով, որում ամփոփված են Վահե-Վահյանի նամակագրությունները 1930-1992 թթ.՝ ընդգրկելով 449 նամակ, 60 ստացած նամակների պատասխանները:

Ելույթ ունեցողները բարձր գնահատեցին ժողովածուի հեղինակ Արամ Սեփեթճյանի աշխատանքը եւ հատկապես նշեցին, որ Վահան Թեքեյան, Վահե-Վահյան, Շահան Շահնուր գրական մտերմիկ կապը շարունակողը եղավ Արամ Սեփեթճյանը յուրատեսակ մի կամուրջ դառնալով սերունդների միջեւ: Արամ Սեփեթճյանի նվիրյալ գործունեությունը ի շահ գրականության ու մշակույթին, ՀԳ Միության եւ սփյուռքի նախարարության նախագահության համատեղ որոշմամբ, պրն Սեփեթճյանը արժանացել է «Վիլյամ Սարոյան» մեդալի: Մեդալն ու ՀԳՄ լիիրավ անդամի տոմսը հանձնեց պրն Անանյանը եւ ջերմորեն շնորհավորեց:

ՀԲԸՄ, ՀԳՄ դիմել են կառավարությանը եւ քաղաքապետարանին, որպեսզի Երեւանի դպրոցներից մեկը եւ մեկ փողոց անվանակոչվի Վահե-Վահյանի անունով:

Սուրեն Դանիելյանը նույնպես բարձր գնահատեց Արամ Սեփեթճյանի ազգանվեր գործունեությունը եւ տեղեկացրեց, որ Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի հրամանագրով, համալսարանի 90-ամյակի հանդիսությունների շրջանակում, Արամ Սեթեփճյանը պարգեւատրվել է «Մանկավարժական համալսարան» հուշամեդալով՝ հայրենիքի եւ սփյուռքի կապերում ունեցած անուրանալի վաստակի համար:

Շնորհանդեսին գեղեցիկ երգեցողությամբ հանդես եկավ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի աշխատակից Քնարիկ Աբրահամյանը: Ներկաները հետաքրքրական հուշեր պատմեցին Վահե-Վահյանի հետ ունեցած շփումների, համագործակցության մասին: Իսկ Հովիկ Յորդեկյանը ներկայացնելով Վահե-Վահյանին, ասաց. «Անուրանալի է Վահյան դաստիարակի, ուսուցչի վաստակը: Շուրջ կես դար նա ծառայել է ՀԲԸՄ-ի կրթարաններում՝ իբրեւ հայերեն լեզվի ու գրականության ուսուցիչ՝ փոխարինելով Վահան Թեքեյանին: Սփյուռքահայ հազարավոր հայորդիներ, հայ գրի ու գրականության հանդեպ սերն ու ակնածանքը, ինչպես նաեւ հայրենասիրական դաստիարակությունն ստացել են Վահե-Վահյանից: Վահյանը եղել է նաեւ «Երվանդ Հյուսիսյան» հայագիտական հիմնարկի հիմնադիր տեսուչը»:

Շնորհանդեսն ավարտվեց Արամ Սեփեթճյանի շնորհակալական խոսքով, որում անդրադարձավ Վահյան գրականագետի, մանկավարժի, գրաքննադատի կարեւոր գործունեությանը:

«**Ազգի**» հարցին պատասխանելով, պրն Սեփեթճյանն ասաց. «Այս գործը նախաձեռնեցի, քանի որ Վահե-Վահյանն իր կտակի մեջ գրել էր, որ հենց ես պետք է անդրադառնամ իր նամակներին: Եվ ես հանձն առա այդ գործը ու «Սիփան» հրատարակչատան ջանքերով եւ Վահյանի որդու՝ Ցոլակ Ապտալյանի մեկենասությամբ այսօր մայր հայրենիքում կայացավ նամականու շնորհանդեսը, որի համար շնորհակալ եմ բոլոր ելույթ ունեցողներին ու ինձ արժանի գնահատողներին»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Զվարթնոց» արգելոց-թանգարանը նոր՝ մշտական ցուցադրությամբ է ներկայանում

*«Զվարթնոցի» տաճարը վաղ միջնադարյան հայ արվեստի նվաճումների հանրագումարն է»: Տաճարի մասին բնորոշումն ամբողջական է: «Զվարթնոց»-ը կամ Երկնային հրեշտակների տաճարն այսօր էլ հետաքրքիր է ոչ միայն հայ ճարտարապետների, այլեւ՝ արտասահմանցիների համար: Արգելոց-թանգարանում պահվում են պեղումների արդյունքում հայտնաբերված իրերը, գտածոները: Օրերս «Զվարթնոց»-ը հանրությանը ներկայացավ նոր՝ մշտական ցուցադրությամբ: Եվ սա միակ նորությունը չէ: Այսուհետ տաճարի գեղեցկությամբ երեկոյան ժամերին հնարավոր է հիանալ՝ գիշերային լուսավորության առկայությամբ: Պատմամշակութային արժեքների, «Զվարթնոցի» տաճարի ու հուշարձանների պահպանության մասին «**Ազգ**»-ը զրուցել է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանություն ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար **Վլադիմիր Պողոսյանի** հետ:*



**- Պրն Պողոսյան, նախ ի՞նչ է նշանակում նոր ցուցադրություն: Քանի՞ նմուշ է ներկայացված եւ արդյո՞ք դա ժամանակավոր բնույթ է կրելու:**

- «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի նոր՝ մշտական ցուցադրությունը բացվեց հուշարձանների պահպանության միջազգային օրը եւ դա խորհրդանշական էր: Այս ցուցադրությունը մենք տեւական ժամանակ է ինչ պատրաստվում էինք: Մեծ պատասխանատվություն է ներկայանալ նոր ասելիքով: Թանգարանում առաջին անգամ ներկայացվել է 177 իր: Ցուցադրությունը բաղկացած է հնագիտական, պատմական եւ աղբյուրագիտական, ճարտարապետական բաժիններից: Ներկայացվել են VII-XIII դդ. հայ պատմիչների արժեքավոր վկայությունները «Զվարթնոց» տաճարի մասին, տարբեր տարիներին հուշահամալիրի տարածքում կատարված պեղումների մասին պատմող բացառիկ փաստավավերագրական նյութեր, արխիվային լուսանկարներ, փաստաթղթեր, արժեքավոր աշխատություններ, մենագրություններ: Այստեղ նաեւ Թորոս Թորամանյանի կողմից արված չափագրություններն ու հատակագծերն են: Ուզում եմ շեշտել, որ դրանք բոլորն էլ բնօրինակներ են: «Զվարթնոց»-ն այսուհետ նաեւ գիշերային լուսավորություն կունենա: Տաճարի վրա լույսերը սփռվում են չորս աշտարակներից: Մինչ օրս պատմամշակութային արգելոց-թանգարաններից գեղարվեստական լույսերով լուսավորվել է միայն Գառնիի հեթանոսական տաճարը՝ հնարավորություն տալով ձայնի ու լույսի խորհրդում այն յուրովի ընկալել:

**- Պրն Պողոսյան, «Զվարթնոց»-ը զբոսաշրջության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնո՞ւմ է եւ առհասարակ այցելուների հոսքը շա՞տ է:**

- Ցուցադրության նպատակը նաեւ ինքնատիպ պատմամշակութային երեւույթը հասարակությանն ու հատկապես երիտասարդներին ներկայացնելն է, սեփական պատմությանը, ճարտարապետությանն ավելի մոտիկից ծանոթացնելը: 2012-ը «Զվարթնոցի» համար նշանակալի տարի է: Լրանում են արգելոց-թանգարանի հիմնադրման 75-ամյակը եւ «Զվարթնոց» տաճարի օծման 1360-ամյակը: 2000 թ.-ից «Զվարթնոց» հնավայրն ընդգրկված է համաշխարհային ժառանգության ցուցակում: Անշուշտ «Զվարթնոց»-ը ոչ միայն զբոսաշրջիկների հետաքրքրության շրջանակում է, այլ նաեւ՝ մեր հայրենակիցների: Մենք կարեւորում ենք նաեւ բանակի, հանրակրթական օջախների հետ կապը: Թանգարանի դռները միշտ բաց են: Պիտի ասեմ, որ մշակույթ, բանակ, կրթություն արդյունավետ գործակցություն ու տեսանելի արդյունք ունենք: Վկան՝ ապրիլի 18-ին հանրապետության մարզերի հանրակրթական շուրջ 370 դպրոցների 4700-ից ավելի աշակերտների ու պաշտպանության նախարարության զորամասերի ժամկետային զինծառայողների մասնակցությունն էր 500 հուշարձանի, հարակից տարածքների մաքրման եւ բարեկարգման աշխատանքներին: Համախմբող գաղափարը մեկն էր՝ հուշարձանը սոսկ պատմական արժեք չէ եւ նրա հանդեպ հոգածությունը յուրաքանչյուրիս պարտքն է:

**- Պրն Պողոսյան հուշարձանների նկատմամբ պետական հոգածությունը բավարար ե՞ք համարում: Ի՞նչ բացթողումներ կան այս ոլորտում:**

- Ի՞նչ է նշանակում պետական հոգածություն եւ ինչո՞ւ միայն պետական: Ձեւակերպումն ինձ համար ընդունելի չէ: Հուշարձանը, եթե նույնիսկ պետական պահպանության ցանկում է ընդգրկված, միայն պետությանը չի պատկանում: Պատմամշակութային արժեք ներկայացնող յուրաքանչյուր կոթող, հուշարձան մեզանից յուրաքանչյուրինն է: Մեր պատմության մի մասն է, հետեւաբար պատասխանատու ենք բոլորս՝ անկախ տարիքից, մասնագիտությունից: Իսկ ինչ է կատարվում այսօր: Երբեմն ոչնչացնում կամ ավերում ենք դրանք, ապա աղմուկ աղաղակ բարձրացնում, թե պետությունը տեր չի կանգնում: Ցավով պիտի ասեմ, որ լինում են դեպքեր, երբ հարակից տարածքներն ուղղակի աղբավայրի են վերածվում: Ի՞նչ է սա, եթե ոչ վանդալիզմ, ինչու ենք ասում, որ թշնամին ավերում է Ադրբեջանի կամ Թուրքիայի տարածքում գտնվող մեր հուշարձանը, երբ մենք մեր հողում դրանց հետ երբեմն թշնամաբար ենք վերաբերվում:

**- Այդուհանդերձ, քանի՞ հուշարձան կա հաշվառված եւ այդ թիվը գնալով ավելանո՞ւմ է:**

- Հայաստանում հաշվառված է շուրջ 25 հազար հուշարձան: Դրանց թվում հնագիտական, պատմական, քաղաքաշինական, եւ ճարտարապետական, մոնումենտալ արվեստի նմուշներ են, մասնավորապես՝ քարեդարյան կայաններ, քարայր-կացարաններ, հնագույն եւ միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ, դամբարանադաշտեր, գերեզմանոցներ, մեգալիթյան կոթողներ, ժայռապատկերներ, կոթողներ, հուշահամալիրներ, գերեզմաններ: Հուշարձանի պահպանությունն իրականացնում է հուշարձանի սեփականատերը տնօրինողն ու օգտագործողը: Մեր ՊՈԱԿ-ն իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող եւ չօգտագործվող շուրջ 19 հազար հուշարձանի պահպանությունը, ուսումնասիրումը: Պահպանության սուբյեկտ են հանդիսանում նաեւ ՏԻՄ մարմինները, մարզպետարանները, առաքելական եկեղեցին, ֆիզիկական ու իրավաբանական անձինք: Հուշարձանների սեփականատերերը պարտավոր են պահպանության պայմանագիր (պարտավորագիր) կնքել տեղական նշանակության հուշարձանների դեպքում՝ ՏԻՄ մարմինների, իսկ հանրապետական նշանակությանի պարագայում լիազոր մարմնի՝ մշակույթի նախարարության հետ:

**- Երեւանը հռչակվել է գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այդ համատեքստում ի՞նչ հրատարակություններ կլինեն մեր ընթերցողի սեղանին:**

- Վերջին երեք տարիներին 11 հրատարակություն ենք ունեցել: «Անիի մայր տաճարը», «Անիի սուրբ Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենցի)» մատենաշարերը, «Զվարթնոց»-ի (ծալաթերթիկ), «Վահանավանքի վանական համալիրը» (ծալաթերթիկը), այլ կատալոգներ, հրատարակություններ: Ի դեպ, նախորդ տարի նաեւ «Գլաձորի համալսարան ֆիլմ»-ն ենք պատրաստել:

# Նվիրվում է Արամ Խաչատրյանին

ՀՀ մշակույթի նախարարությունը, վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը երաժշտասերներին մայիսի 9-ին ժամը 19-ին հրավիրում են Արամ Խաչատրյան համերգասրահ: Ծրագիրը եւ երեկոն նվիրված են «APSARA MUSIQUE» (Փարիզ) 30-րդ երաժշտական ճամփորդության տոնակատարությանը: Համերգային ծրագրում ընդգրկված են Արամ Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտը, ջութակի կոնցերտը եւ թավջութակի կոնցերտ-ռապսոդիան: Մենակատարներն են Նարե Արղամանյանը (դաշնամուր), Անուշ Նիկողոսյանը (ջութակ), Ալեքսանդր Չաուշյանը (թավջութակ): Համերգի դիրիժորն է Էդուարդ Թոփչյանը: Նշենք, որ համերգաշրջանի գլխավոր հովանավորն է «ՎիվաՍել ՄՏՍ»-ը:

Մ. Մ.

# Արման Վարդանյանը պարգեւատրվեց «Մովսես Խորենացի» եւ Նորայր Ադալյանը՝ «Վիլյամ Սարոյան» մեդալով

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը «Մովսես Խորենացի» մեդալ հանձնեց պոլսահայ գրող Արման Վարդանյանին՝ հայապահպանության գործում ունեցած ավանդի, ինչպես նաեւ Հայաստանի եւ օտարերկրյա պետությունների միջեւ բարեկամության ամրապնդմանը մեծապես նպաստելու համար ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի առթիվ: Հայ արձակագիր, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Նորայր Ադալյանին ծննդյան 75-ամյակի առթիվ նախարար Հ. Հակոբյանը պարգեւատրեց ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալով:

Պարգեւատրվողները շնորհակալություն հայտնեցին նման ուշադրության համար եւ նշեցին, որ իրենց խոսքը միշտ ցանկացել են ներկայացնել իրենց ստեղծագործություններով:

Մ. Մ.

ԱԶԳ

# Մարզական

# Լոնդոնում մրցազորք դուրս կգան հայաստանցի 7 ըմբիշներ

## *2011-ի Հայաստանի լավագույն մարզիկն օլիմպիական ուղեգիր չնվաճեց*



Ֆինլանդիայում ավարտվեց ըմբշամարտի օլիմպիական վարկանիշային վերջին մրցաշարը, որում Հայաստանից յուրաքանչյուր ոճում հանդես եկան 4-ական ըմբիշներ: Նրանցից միայն 66 կգ քաշային, հունահռոմեական ոճի ըմբիշ Հովհաննես Վարդերեսյանին հաջողվեց Լոնդոնի օլիմպիադայի ուղեգիր նվաճել: Հայ ըմբիշը հաջորդաբար հաղթելով կոլումբիացի Խեսուս Արանգոյին, ուկրաինացի Ալան Զակաեւին, Բելառուսը ներկայացնող Ռուստեմ Էմիր-Ամզաեւին ու ռուսաստանցի Իսլամ-Բեկա Ալբիեւին, մտավ եզրափակիչ՝ ապահովելով օլիմպիական ուղեգիրը: Վճռորոշ գոտեմարտում նրա մրցակիցը թուրք Աթական Յուկսելն էր: 3-0 հաշվով հաղթեց թուրք ըմբիշը: Վարդերեսյանն օլիմպիական ուղեգրի հետ մեկտեղ նաեւ արծաթե մեդալ նվաճեց:

Այսպիսով, Լոնդոնում Հայաստանը կներկայացնեն 7 ըմբիշներ. 4-ը՝ հունահռոմեական, 3-ն՝ ազատ ոճի:

Անհաջողության մատնվեց Հայաստանի անցյալ տարվա լավագույն մարզիկ Ռոման Ամոյանը (55 կգ), որը չկարողացավ օլիմպիական ուղեգիր նվաճել: Նա հաջողությամբ հաղթահարեց առաջին 2 փուլերը՝ հաղթելով լեհ Մարիուշ Լոսին եւ մոլդովացի Վիկտոր Ջիովանուին: Քառորդ եզրափակիչում Ամոյանի հաղթարշավը կանգնեցրեց Ղրղզստանի ներկայացուցիչ Արսեն Երալիեւը: Ամոյանն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար, որը նրան այլեւս ուղեգիր չէր կարող պարգեւել, քանի որ դրա համար անհրաժեշտ էր մտնել եզրափակիչ: Սակայն բրոնզե մեդալ նվաճել էլ Ռոմանին չհաջողվեց: Առաջին գոտեմարտում նա պարտվեց Գերմանիան ներկայացնող Կեյհուն Զահիդովին:

Անհաջող հանդես եկան նաեւ ազատոճայիններ Արթուր Առաքելյանը (60 կգ), Մուսա Մուրթազալիեւը (74 կգ), Էդգար Ենոքյանը (96 կգ), գերծանրքաշային Ռուսլան Բասիեւը, հունահռոմեական ոճի ըմբիշներ Նարեկ Խաչատրյանը (60 կգ) եւ Արթուր Շահինյանը (84 կգ): Ընդ որում Առաքելյանն ու Շահինյանն իրավունք էին ստացել պայքարելու բրոնզե մեդալների համար, սակայն այստեղ էլ անհաջողության մատնվեցին: Առաքելյանը պարտվեց լեհ Կրժիժտոֆ Բիենկովսկուն, իսկ Շահինյանը զիջեց մոլդովացի Անդրիան Մոկանուին:

# «Միկան» առաջին պարտությունը կրեց

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունում բավականին հետաքրքրական իրադարձություններ են ծավալվում: 7-րդ տուրում առաջին պարտությունը կրեց առաջատար «Միկան», որը սեփական հարկի տակ 0-2 հաշվով զիջեց «Գանձասարին»: Արդեն 18-րդ րոպեին Դեյան Վուկոմանովիչը բացեց հաշիվը: «Միկային» ոչ միայն չհաջողվեց վերականգնել հավասարակշռությունը, այլեւ ավելացված ժամանակում 2-րդ գոլը բաց թողեց: Աչքի ընկավ Հայրապետ Ավագյանը: Այս հաղթանակի շնորհիվ «Գանձասարն» ընդհուպ մոտեցավ առաջատարին՝ հավասարվելով «Միկային» կորցրած միավորներով: Վաղը «Գանձասարը» Կապանում 6-րդ տուրից հետաձգված խաղում հյուրընկալելու է «Շիրակին» եւ հաղթանակի դեպքում միավորներով կարող է հավասարվել «Միկային»:

Դրամատիկ պայքարում անցավ «Արարատի» եւ «Փյունիկի» մրցավեճը: Աբովյանում կայացած խաղում արդեն 4-րդ րոպեին Հովհաննես Հովհաննիսյանն առաջ մղեց «Փյունիկին»: Հետագայում արարատցիներին հաջողվեց 2 անգամ գրավել փյունիկցիների դարպասը եւ հաշվի մեջ առաջ անցնել: 2 գոլերն էլ խփեց Կարեն Խաչատրյանը: Թվում էր, թե արարատցիները կհաղթեն, սակայն խաղավերջում ընդամենը մեկ րոպեում 2 գոլ բաց թողեցին ու ցավալի պարտություն կրեցին: «Փյունիկից» գոլերի հեղինակներ դարձան Վիլեն Այվազյանն ու Գոռ Մալաքյանը: Անհաջող մեկնարկից հետո «Փյունիկն» աստիճանաբար շտկում է մրցաշարային իր վիճակը:

Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում գավաթի եզրափակիչի մասնակիցներ «Շիրակի» եւ «Իմպուլսի» առաջնության հանդիպումը Գյումրիում: Հյուրերը 26-րդ րոպեին Վահագն Այվազյանի հարվածով բացեցին հաշիվը: Շիրակցիներից 12 րոպե պահանջվեց հաշիվը հավասարեցնելու համար: Աչքի ընկավ Դավիթ Հակոբյանը: Խաղավերջում «Շիրակին» հաջողվեց կորզել հաղթանակը: Նախ Արա Մկրտչյանը գրավեց Գոռ Էլյազյանի պաշտպանած դարպասը, ապա ավելացված ժամանակում Լամին Լի Յորոն 3-րդ գոլը խփեց՝ ապահովելով «Շիրակի» լիարժեք հաղթանակը՝ 3-1:

Անհաջող ելույթներն է շարունակում երկրի չեմպիոն «Ուլիսը», որին ոչ մի կերպ չի հաջողվում առաջին հաղթանակը տոնել: «Բանանցի» հետ մրցավեճում գրանցվեց գոլազուրկ ոչ-ոքի: «Ուլիսը» 2 միավորով շարունակում է եզրափակել աղյուսակը: Այսօր «Ուլիսն» Իջեւանում 6-րդ տուրից հետաձգված խաղում կմրցի «Իմպուլսի» հետ:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 6 | 4 | 1 | 1 | 9-5 | 13 |
| 2. Գանձասար | 5 | 3 | 1 | 1 | 6-1 | 10 |
| 3. Շիրակ | 5 | 3 | 0 | 2 | 6-6 | 9 |
| 4. Իմպուլս | 5 | 3 | 0 | 2 | 10-7 | 9 |
| 5. Բանանց | 6 | 2 | 2 | 2 | 7-6 | 8 |
| 6. Փյունիկ | 6 | 2 | 2 | 2 | 6-7 | 8 |
| 7. Արարատ | 6 | 1 | 0 | 5 | 6-15 | 3 |
| 8. Ուլիս | 5 | 0 | 2 | 3 | 2-5 | 2 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 3 |
| Աղվան Մկրտչյան | «Միկա» | 3 |

# Թենիսի ավանդական մրցաշար Մոսկվայում

Մոսկվայի «Մեգասֆերա» մարզահամալիրում անցկացվեց «Արմենիա-Դիասպորա կապ» խորագիրը կրող թենիսի բաց առաջնության 7-րդ մրցաշարը: Արդեն ավանդական դարձած եւ տարեցտարի մեծ համբավ ու ճանաչում վայելող մարզական այս գեղեցիկ միջոցառումը վերստին կազմակերպվել էր Մոսկվայում Երեւանի քաղաքապետարանի մշտական ներկայացուցիչ **Մակար Նահապետյանի** ակտիվ ջանքերի շնորհիվ:

Մրցաշարն այս անգամ էլ նպատակ ուներ միավորելու եւ համախմբելու մեր հայրենակիցներին մեծ սպորտի շուրջ, բարձրացնելու երիտասարդ սերնդի հայրենասիրական ոգին, վառ պահելու հայ մարդու կերպարը՝ առողջ ու ամուր նկարագրով, ինչպես եւ ներգրավելու թենիսի սիրահարներին ակտիվ եւ առողջ կենսակերպում: Առաջնությանն իրենց մասնակցությունն էին բերել նաեւ մեր հայրենակիցների մանկապատանեկան խմբերը, որոնք ժամանել էին տարբեր երկրներից:

Թեեւ մրցավարները հայտարարեցին կոնկրետ հաղթողների անունները եւ տրվեցին պարգեւներ, սակայն մթնոլորտն այնքան տոնական էր եւ միջոցառումը գունագեղ, որ կարելի է ասել՝ հաղթեց բարեկամությունը, իսկ առավել ստույգ՝ հայկական ոգին:

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ
Մոսկվա

# «Չելսին» Անգլիայի գավաթակիր

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի վճռորոշ հանդիպումից առաջ Լոնդոնի «Չելսին» հաջողության հասավ Անգլիայի գավաթի եզրափակիչում՝ 2-1 հաշվով հաղթելով «Լիվերպուլին»: Արդեն 2-րդ խաղակեսի սկզբում «Չելսին» Ռամիրեսի եւ Դրոգբայի հարվածների շնորհիվ հաղթում էր 2-0 հաշվով: Մնացած ժամանակահատվածում «Լիվերպուլին» հաջողվեց միայն կրճատել հաշիվը Քերոլի խփած գոլի շնորհիվ:

Այժմ «Չելսին» նախապատրաստվում է ընթացիկ մրցաշրջանի իր գլխավոր մրցախաղին՝ Մյունխենում տեղի «Բավարիայի» հետ կայանալիք չեմպիոնների լիգայի եզրափակիչին:



# Հենրիխ Մխիթարյանն Ուկրաինայի կրկնակի գավաթակիր



Հենրիխ Մխիթարյանը Դոնեցկի «Շախտյորի» կազմում 2-րդ տարին անընդմեջ դարձավ Ուկրաինայի գավաթակիր: Պատվավոր մրցանակի համար վճռորոշ խաղում «Շախտյորը» լրացուցիչ ժամանակում 2-1 հաշվով պարտության մատնեց Դոնեցկի «Մետալուրգին»: Հաղթական գնդակը «Շախտյորից» 104-րդ րոպեին խփեց Կուչերը:

Հենրիխ Մխիթարյանը «Շախտյորի» կազմում հանդես եկավ 62 րոպե: «Մետալուրգում» խաղին մասնակցեցին նախկին փյունիկցիներ Գեւորգ Ղազարյանն ու Կառլեն Մկրտչյանը: Վերջինս մասնակցեց ողջ հանդիպմանը, իսկ Ղազարյանը փոխարինվեց 74-րդ րոպեին: «Մետալուրգն» իրավունք ստացավ հանդես գալու Եվրոպայի լիգայի մրցաշարում: Իսկ «Շախտյորը» իհանալի հնարավորություն ունի նվաճելու նաեւ երկրի չեմպիոնի տիտղոսը:

# Հրանտ Մելքումյանը գերազանց է մեկնարկել

Հրանտ Մելքումյանը գերազանց է մեկնարկել Սարաեւոյում ընթացող շախմատի մրցաշարում, որի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 20 հազար եվրո է: Անցկացրած 3 տուրից հետո նա 100 տոկոսանոց արդյունքով սերբ Ալեքսանդր Կովաչեւիչի հետ գլխավորում է աղյուսակը: Մելքումյանը մեկնարկում հաղթել է բոսնիացի Էմիր Դիզդարեւիչին, Իսրայելը ներկայացնող Տամիր Նաբատին եւ թուրք Մուստաֆա Յիլմազին: 4-րդ տուրում առաջատարները կմրցեն միմյանց հետ:

# Մեկ մրցանակակիր

Բեռլինում կայացած ձյուդոյի Եվրոպայի պատանիների գավաթի խաղարկությունում Հայաստանի հավաքականի կազմում տասամի դուրս եկած 6 ձյուդոյիստներից մրցանակակիր դարձավ միայն Ալբերտ Մկրտչյանը: Մինչեւ 66 կգ քաշային կարգում հայ ձյուդոյիստը տոնեց 5 հաղթանակ, կրեց մեկ պարտություն եւ արժանացավ բրոնզե մեդալի:

Մարտին Սարգսյանի գլխավորությամբ հանդես եկած մեր հավաքականի անդամների համար այս մրցաշարն ուժերի վերջին փորձարկումն էր հունիսի 22-24-ը Չեռնոգորիայի Բար քաղաքում կայանալիք Եվրոպայի առաջնությունից առաջ:

# Մինչեւ բանտարկվելը Մեյվեզերը նվաճեց չեմպիոնական գոտին



Քաշային 5 կարգերում աշխարհի չեմպիոն, ամերիկացի Ֆլոյդ Մեյվեզերը նվաճեց առաջին միջինքաշային կարգում WBA-ի վարկածով չեմպիոնական գոտին՝ Լաս Վեգասում 12-ռաունդանոց մենամարտում միավորներով առավելության հասնելով պուերտոռիկացի Միգել Կոտոյի նկատմամբ (118-110, 117-111, 117-111):

Անկախ մենամարտի արդյունքից, Մեյվեզերին խոստացվել էր 32 մլն դոլար պարգեւավճար, իսկ Կոտոյի գումարը 4 անգամ պակաս էր: Դա համաշխարհային բռնցքամարտի պատմության մեջ ամենաբարձր երաշխավորված պարգեւավճարն էր: Նախկինում ամենաբարձրը Մայքլ Թայսոնի պարգեւավճարն էր (30 մլն դոլար) 1997-ին Էվանդեր Հոլիֆիլդի հետ կայացած մենամարտում:

Կոտոյին հաղթելուց հետո Ֆլոյդ Մեյվեզերը կրկին հայտարարել էր, որ ցանկանում է մենամարտել Մենի Պակյաոյի հետ: Վերջինս վաղը մենամարտելու է Տիմոթի Բրեդլիի հետ:

Ֆլոյդ Մեյվեզերը պրոֆեսիոնալ ռինգում 43-րդ մենամարտն անցկացրեց: Բոլոր մենամարտերում էլ ամերիկացի բռնցքամարտիկը հաղթել է: Շուտով Մեյվեզերը ստիպված կլինի 3 ամսով բանտ նստել: Նա 3-ամսյա բանտարկության էր դատապարտվել նախկին ընկերուհուն ծեծելու համար: Մեյվեզերը դեռեւ հունվարին պետք է բանտ նստեր, սակայն պատժի կրումը հետաձգվեց, որպեսզի ամերիկացի բռնցքամարտիկը մենամարտ անցկացներ: Չեմպիոնի տիտղոսը նվաճելուց հետո այժմ Մեյվեզերը կարող է հանգիստ ուղեւորվել բանտ:

# «Ինտերը» նպաստեց «Յուվենտուսի» չեմպիոնությանը

Իտալիայի առաջնության ավարտից մեկ տուր առաջ Թուրինի «Յուվենտուսը» 28-րդ անգամ նվաճեց երկրի չեմպիոնի տիտղոսը: Առաջնության 37-րդ տուրում «Յուվենտուսը» 2-0 հաշվով հաղթեց «Կալյարիին» ու անհասանելի դարձավ մրցակիցների համար: «Յուվենտուսի» չեմպիոնությանը նպաստեց նաեւ «Ինտերը», որը 4-2 հաշվով պարտության մատնեց թուրինցիների գլխավոր մրցակցին՝ «Միլանին»:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Այս ընտրությունների առանձնահատկությունները

*1-ին էջից*

Առավել իրատեսական, առավել գործուն կարգախոսներ են աշխատում այդպիսով, ավելի պարզ խոստումներն են ազդում, ու գաղափարական հեռանկարները մեր ժողովրդի գերակշիռ մասին անտարբեր են թողնում, որքան էլ ցավալի է դա ընդունելը: Ավելի գործուն եւ ազդեցիկ է խմբային շահը, օրվա կարիքը եւ այլն, եւ սա հայ ընտրողի դժբախտությունը կարելի է համարել:

Վերհիշելով ընտրական օրվա պատկերը՝ կարելի է նաեւ գծել ընտրությունների կոնկրետ առանձնահատկություններ:

Ընտրական օրվա առավոտյան ընտրատեղամասերում հերթ էր, պատկերացրեք՝ մի կես ժամ հերթ էիր կանգնում ընտրելու համար: Չգիտենք՝ կա արդյո՞ք այստեղ օրինաչափություն, ու որոշակի կազմ էր առավոտ վաղ ընտրելու կանչվել՝ որոշակի նպատակներով (ականատեսներ կան, որ ընտրակնիքի անհետանալուց տեղյակ են եղել ընտրատեղամասերում, ու դա կրկնակի քվեարկության դուռ է բացել), սակայն փաստը մնում է փաստ, որ մինչեւ ցերեկվա ժամը 1-ը ընտրատեղամասերում հերթեր էին: Անմիջապես էլ հայտնի դարձավ ընտրակնիքների անհետանալը անձնագրերից ռոպեների եւ ժամերի ընթացքում: Ճիշտ է, ժամանակի ընթացքում ԿԸՀ-ն հրահանգեց սկզբում թափահարել ընտրաթանաքը, հետո այն փոխարինեցին սովորական թանաքով: Ու ի դերեւ ելան ժամանակին եվրոպացի փորձագետների մտահոգությունները՝ ընտրության մասնակցության գաղտնիությունը պահպանելու համար անհետացող թանաքով կնիք ամրագրել ընտրական օրենսգրքում. իմ անձնագրում դրված է չանհետացող թանաքով կնիք, որը յուրաքանչյուր անձնագիր ուզողին պատմելու է ընտրություններին իմ մասնակցելու մասին: Գաղտնիություն՝ չկա: Մինչդեռ միասնական շտաբի դիմումը Սահմանադրական դատարան մայիս 5-ին մերժվեց՝ ընտրացուցակների հրապարակումը ընտրության գաղտնիության խախտում է: Ընտրության օրվա առավոտից սոցիալական ցանցերը լցվեցին ընտրախախտումների վերաբերյալ տարբեր հաղորդումներով՝ գունավոր գրիչներով են քվեարկում, կուտակումներ են, եւ այլն, եւ այլն, ապա եւ միմյանց դեմ սեւ քարոզչության ունիկալ նմուշներ նետվեցին ցանց, իսկ ավելի ուշ, ընտրություններից անմիջապես հետո, այդ նմուշները ցանց նետած փիարշչիկներին կարելի էր տեսնել հեռուստաէկրաններին: Այս անգամ ցուցադրվող ֆիլմերն էլ այլ էին. եթե նախորդ ընտրությունների օրը կարելի էր «Զանգեզուր» ֆիլմը տեսնել, քանի որ այնտեղ Դաշնակցության դեմ մեղադրանքներ կային, այս անգամ «Սայաթ-Նովան» էր ցուցադրվում՝ «Ախ, թե մի խորվաթ տեղ կու պատահիմ քիզ՝ ես գիդիմ ու դու», հավանաբար կոալիցիոն գործընկերն էր անուղղակի բան հասկացնում մի այլ կոալիցիոն գործընկերոջ:

Ամենացնցողը բայց միմյանցից հաջորդող ալիքների վրա «Արմնյուզի» եւ «Կենտրոնի» հաղորդումների՝ տրամագծորեն տարբեր ուղղվածության մեկնաբանություններն էին, ու երբ բանը հասավ էկզիտփոլին՝ «Արմնյուզով» ցույց էին տալիս Գելափ-ինտերնեշնլի հարցումը (ՀՀԿ-ն՝ 44,44, ԲՀԿ-ն 28,8 տոկոս ստանալու մասին), «Կենտրոնով» էլ հանդիպակաց էքզիթ-փոլ էին ցուցադրում, որտեղ ԲՀԿ-ն 38 տոկոս էր ստանում, ՀՀԿ-ն 25, ԲՀԿ-ին մերձ ընդդիմադիրներն էլ ավելի բարձր տոկոս էին ստանում, քան տալիս էր Գելափ-ը:

Ավանի 1/10 ընտրատեղամասի հերթերից հետո այցելեցի 7-րդ ընտրատարածքի Օսյան փողոցի տեղամաս, որտեղ ընտրությունների օրինականությանն էր հետեւում «Հայկական ժամանակի» **Լուսինե Բարսեղյանը**, ու նա ասում էր, որ շատ մարդիկ են լրացուցիչ ցուցակով ընտրել: Դրսում էլ ես ականատես եղա սեւ մեքենայի մեջ ինչ-որ ցուցակներ առած-նստած տղամարդկանց, որոնք նշումներ էին անում ցուցակներում, երեւի նշում էին՝ «իրենցականներից» ո՞վ եկավ, ով՝ ոչ:

Կոմիտասի փողոցի մի քանի տեղամասում էլ շրջեցի՝ արտաքուստ ամեն ինչ հանգիստ էր, սակայն բոլորը նշում էին տաքսիներով եւ երթուղայիններով ընտրողներին բերելու մասին, խոսում ընտրակաշառքների ու նրանց չափերի մասին (սրանք միայն խոսակցություններ էին՝ աչքով տեսնել չեղավ), ցույց տալիս շենքերի կուսակցական պատասխանատուներին, որոնք գալիս-սպասում էին, մինչեւ իրենց շենքի ընտրողները գան-ընտրեն, որից հետո էլ միայն իր գործն արած համարում ու հեռանում: Ընտրությունների հայկական տարբերակն ուրիշ է, լրիվ անհասկանալի եվրոպացիների համար: Մենք ենք, ու մեր ընտրությունները:

Էլի մանրամասներ կպատմենք՝ դեռ երկար հետընտրական փուլ է լինելու՝ այս գլխից էլ պարզ է:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.** «Ազգ» թերթի մայիսի 4-ի 81(4933) համարում 8-րդ էջում տպագրված՝

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԱՇՁԲ-97 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 14-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

***Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԱՇՁԲ-***

....

*ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, Հեռ. 58 51 78*

ծանուցումը կարդալ հետեւյալ կերպ.

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է ՀՀ ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ՊԸԱՇՁԲ- 12/97 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2012թ. ապրիլի 25-ի թիվ 1 որոշմամբ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

***Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ՊԸԱՇՁԲ-12/97***

....

*ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, Հեռ. 58 51 78*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 25-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

***Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ԱՇՁԲ - 20/12***

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:

Հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի մեքենայական սրահի 125/20 տ. ուժ կամրջակային ամբարձիչի ենթաամբարձիչային գծերի վերանորոգման աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու մեքենայական սրահի 125/20 տ. ուժ կամրջակային ամբարձիչի ենթաամբարձիչային գծերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2012թ. օգոստոսի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել բաց ընթացակարգին, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգի թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու պահից հաշված 40-րդ օրվա ժամը 14:00-ն:

Բաց ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով կամ համարժեք արտարժույթով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում բաց ընթացակարգի հրավերը տրամադրել բաց ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին հետևյալ հասցեով. Արմավիրի մարզ ք. Մեծամոր, վարչական մասնաշենք, մինչև սույն հայտարարության հրապարակման պահից հաշված 40-րդ օրվա ժամը 14:00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում:

Հայտերի բացման վայրը, օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Հաղթող մասնակցին որոշելու համար կիրառվելու են հետևյալ չափանիշները

- հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, բավարար գնահատված և մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 1 որոշմամբ**

**ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ - 54/12**

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի կարիքների համար ցածրավոլտ սարքավորումների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում ցածրավոլտ սարքավորումների մատակարարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2012թ. սեպտեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 27-ի թիվ 1 որոշմամբ**

**ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՊՁԲ - 53/12**

Պատվիրատուն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի կարիքների համար միջադիրների և խծուծների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում միջադիրների և խծուծների մատակարարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2012թ. նոյեմբերի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 13-րդ օրացուցային օրվա ժամը 13:30-ն: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 13-րդ օրացուցային օրվա ժամը 13:30-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

***«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն***

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ARMENPRESS

Միայն կարևորի մասին

www.armenpress.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 7.5.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: